

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶՈՒ ԱԲՅԱՆ ՀԱԿՈՒ ՄԱՐՏԱՅԻ

ՔԵՍԱՊ

(ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆ – 2016

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЧОЛАКЯН АКОП МАРТАЕВИЧ

КЕСАП
(ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
Доктора исторических наук
По специальности 07.00.04 - <Этнография>

ЕРЕВАН 2016

Ատենախոսություն թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
հնագիտություն և ազգագրություն ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսություն՝

Կ. Գ. Ռ. ԿրոնՖ. Է.
Լ. Մելքոնյան
Կ. Գ. Ռ. ԿրոնՖ. Ռ. Ա. Նահապետյան
Կ. Գ. Ռ. Յ. Տ. Մարոնյան

Առաջատար կազմակերպությունը՝
Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության
բաժին

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. սեպտեմբերի 27-
ին՝ ժամը 14:00-ին,

ՀՀ ԳԱԱ հնագիտության ազգագրության ինստիտուտում
(Երևան-0025, Չարենցի փող. 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. օգոստոսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Հրաչյա
Մելքոնյան

Тема диссертации утверждена на совете секции этнографии Института
Археологии и Этнографии НАН РА

Официальные оппоненты .

Ведущая организация: Отдел этнографии Музея истории Армении
Защита состоится 27 августа 2016 г. в 14:00 часов в Институте
Археологии и Этнографии НАН РА (адрес: Ереван-25, ул. Чаренца 15) на
заседании Специализированного Совета 007

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института Археологии
и Этнографии НАН РА

Автореферат разослан 2016

Ученый секретарь Специализированного Совета

Кандидат исторических наук

У. А. Мелконян

ԱՏԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ատենախոսությունն այն նյութը Քեսաբի հայ գաղթավայրի, իբրև պատմա-ազգագրական ինքնուրույն մի միջավայրի, պատմությունն ու ազգագրությունն է:

Մինչև մեր աշխատանքը՝ Քեսաբը, որպես հայություն պատմա-ազգագրական ուրույն շրջանակ, հայագիտության՝ պատմություն, ազգագրություն, բանագիտություն ու բարբառագիտության բնագավառներում մասնակի և կցկտուր պատկերացումներով Էր ներկայանում: Սույն ուսումնասիրության արդիականությունն էլ ավելի է կարևորվում՝ կապված 2-րորդ աշխարհամարտից հետո սկիզբ առած ներգաղթով՝ դեպի Յայաստան, ու արտագաղթով՝ դեպի աշխարհի տարբեր երկրներ, ինչի հետևանքով դարեր շարունակ իր ինքնուրույն դիմագիծը պահպանած հայությունն հոծ գանգվածով այս հատվածը սկսեց կորցնել իր գուտ հայաբնակ լինելու հատկանիշը, տնտեսության ուսումնական փոփոխությունների պատճառով կենցաղից սկսեցին դուրս մնալ աշխատանքի բազմաթիվ տեսակներ, նյութական և հոգևոր մշակույթի մի շարք տարրեր: Մինչև վերջին՝ շուրջ քառասուն տարիների ընթացքում մեր կատարած և հրատարակած ուսումնասիրությունները, գաղթավայրի պատմություն ու բարբառի մասին այլ համապարփակ ուսումնասիրություններ չկային: Ամբողջովին անծանոթ էին մնում հատկապես ազգագրությունն ու բանահյուսությունը: Իսկ վերջերս սկսված ուսնագնացող սիրիական պատերազմի հետևանքով օրհասական պահեր ստեղծվեցին քեսաբահայության համար: Վտանգը ոչ միայն հայկական մի գաղթավայրի, այլ և հայկական տոհմիկ մի մշակույթի գոյատևմանն էր սպառնում: Մի անգամ ևս հրամայական է դառնում համապարփակ և գիտականորեն հանրության սեփականությունը դարձնել Քեսաբի շրջանի հայոց պատմությունն ու ազգագրությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է համապարփակ ուսումնասիրություն բերկայացնել Քեսաբի հայ գաղթավայրի, իբրև պատմա-ազգագրական ինքնուրույն մի միջավայրի, պատմությունն ու ազգագրությունը:

Աշխատանքում փորձ է արվում ներկայացնել և լուծել հետևյալ հիմնահարցերը.

– 18-19-րդ դարերում չորս խմբավորումներով ներկայացող Անտիոքի շրջանի հայությունը՝ իբրև 9-12-րդ դարերի ընթացքում հաստատված հայ հոծ բնակչության մնացորդ.

- 15-16-րդ դարերում ներքին տեղաշարժերի հետևանքով Անտիոքի շրջանի Քեսաբի հայկական գաղութի կազմավորումը.

- Եթևո-լեզվական և Եթևո-կրոնական տարբեր հավաքականությունների օղակում գոյատևելու համար հայերեն բարբառի և տոհմիկ ազգագրության դերի բացահայտումը.

- Եգիպտոսի տասնամյա իշխանության տարիներին (1832-1842թթ.) Սիրիայում քրիստոնյա բնակչության տնտեսական, հասարակական և կենցաղային փոփոխությունների արտաքին և ներքին դրդապատճառները.

- Օտարադավանության տարածաշրջան մուտք գործելու ներքին (ներհայկական) և արտաքին (արտահայկական) պատճառները.

- Ազգային գաղափարական-հեղափոխական շարժումների դերը միջհարավանական հակամարտությունների նահանջի, ազգային կրթության կարևորության ու ազգային արժեքների վերազնահատման մեջ.

- 1909-ի աղետը, դրան հաջորդող վերելքի տարիներն ու 1915թ. տարագրությունը.

- 1919-1922թթ. տուև դարձած քեսաբցի վերապրողների ինքնապաշտպանության քառամյա փորձառությունը.

- 1939թ. Յաթայի պետության կազմից Քեսաբի շրջանի դուրս գալու և սիրիական պետության մաս կազմելու գործում ներքին և արտաքին ուժերի դերը.

- Կուսակցական հակամարտությունների արտացոլումը հարավանական-եկեղեցական, միութենական ու կրթական կյանքում.

- 1947թ. գանգվածային հայրենադարձության պատճառներն ու հետևանքները.

- Քեսաբի կապվածությունը Լաթաբիայի, Յալեայի և Բեյրութի թեմական-եկեղեցական, կրթական ու մշակութային-միութենական կենտրոնների հետ.

- Լիբանանի, Արաբական ծոցի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի քեսաբցիների ներդրումը Քեսաբի կյանքում.

- Հայկական ինքնության պահպանման գործում բարբառի և ազգագրական տոհմիկ տարրերի հետ համեմատած հայ եկեղեցու, դարոցի և միութենական ակումբի դերի գերազանցությունը արդի պայմաններում.

- 2014թ. մարտի 21-ին ծայրահեղ իսլամական միավորումների թուրքիայից Քեսաբ ներխուժումը և դրան հետևանքները.

- Երկրագործության և անասնապահության մեջ աշխատանքի հիմնական տեսակները, միջոցները, բերքն ու արտադրությունը մինչև 1950-ական թվականները.

- Ասորան քափոխանակության մբ, կիսարություն մբ ու քառորդով ասորուստ հայթայթելու կերպերը փանտեսությունն այս մասներում.

- 19-րդ դարի կեսերից մինչև 1939թ., երբ Քեսաբը նոր սահմանագծումի պատճառով մեկուսացվեց, գյուղատնտեսական արտադրությունների հավաքման ու արտածման մեջ Քեսաբի շուկայի կատարած առաջատար դերի հիմքերը.

- Տնայնագործության և արհեստների պատկերը հին Քեսաբում.

- Քեսաբում տան և հարակից բաժինների կառույցն ու հարդարանքը, տարազը, մթերքների պատրաստման եղանակներն ու առօրյան ծիսական խոհանոցի պատկերը.

- Ընտանիքի կազմության, հասարակական հարաբերությունների, տնակատարությունների, խաղերի, ժողովրդական բժշկության հետ կապված ծեսերն ու արարողությունները, կերպերը, տեսակները, դրանց առևձված հասկացություններն ու հավատալիքները.

- Ժողովրդական բառ ու բանի, երգ ու պարի, խաղ ու ծեսի առկայությունը ազգագրական շատերևույթների մեջ:

- 20-րդ դարի կեսերին ճարտարագիտության ու հաղորդակցության միջոցների բերած փոփոխությունները շրջանի հայոց նյութական ու հոգևոր մշակույթում, փոխակերպման երևույթները կամ նախկինից եկած որոշ տարրերի պահպանումը՝ իբրև ինքնության յուրահատուկ դրսևորում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության հիմնական աղբյուրներն առաջին հերթին տպագիր նյութերն են: Գաղթավայրի մասին առաջին գրավոր հիշատակությունները գալիս են 19-րդ դարի կեսերից: Քեսաբին անդրադառնում են երուսաղեմի Յայոց պատրիարքության «Սիօն» ամսագիրը, Կոստանդնուպոլսի «Մասիս», 2մյուռնիայի «Արեւելեան Մամուլ» թերթերը և այլն: Այդ գրվածքներից կարևոր են Չաքարիա վարդապետ 2մյուռնացու «Լադաբիոյ Յայաբնակ Գիւղօրեից Ստորագրութիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը» («Սիօն», 1866, թիվ 7, 1 հունիսի, էջ 97-103) և Կ(իրակոս) Ղազանճյանի «Ճամբու Նօթեր» («Մասիս», թիվ 2523, 12 հունվարի 1880թ.) հոդվածները:

1909թ. աղետի մասին առաջին կամ ստորագիր անձի «Քեսապի Դեպքը - Ականատեսի Պատմութիւն» («Ուսաբերու-Արեւ», Կահիրե, 13 մայիսի 1909թ.) հոդվածում, Լաթաքիայում ամերիկացի միսիոներու հիներ Մաթի Ուիլի և Չառա Փաթընի համահեղինակած տեղեկագրում, ամերիկացի միսիոներ վերապատվելի Սթիֆեն Ռ. վան Տրոպիչի «Քեսապի

կողոպուտը», Վահան քահանա Գյուլղայյանի «Կիլիկիոյ Աղետն Կերջ» վկայություններում («Տաթև» կրոնական տարեգույց, 3-րդ տարի, 1928թ., էջ 232) և այլն:

1920-ական թվականներից թղթակցություններ են երևում համայնքային ու կուսակցական պաշտոնաթերթերում (Անթիլիասի «Հասկ» ամսագիր, ավետարանականների «Նոր Աւետաբեր», ապա «Ջանասեր», կաթոլիկների «Աւետիք», «Մասիս», «Չուարթնոց», Ալեքսանդրետի «Չարթոնք», 3-րդ տարի «Եփրատ» և «Արեւելք», ամերիկահայ «Հայաստանի կոչնակ»): 1970-ական թվականներից նման նյութեր երևում են Բեյրութի «Ազդակ», «Չարթոնք» ու «Արարատ» օրաթերթերում, և ավելի հաճախ՝ 3-րդ տարի «Գանձասար» շաբաթաթերթում:

1940-ական թվականներին լուսարձակի տակ են առնվում գլխավորաբար 20-րդ դարի մի քանի իրադարձություններ կամ այսուհանդերձ հարանվանության պատմությունը, ինչպես Ալբեր Թեմիրյանի, վեր. Կարապետ Թիլքյանի, Մովսես Շահբաջյանի գրքերը, Պետրոս Ադամյանի «Անտիոքի Անտոնեան Թեմը Եւ Քեսապի Ու Շրջակայքի Հայ Կաթողիկէ Առաքելութիւնը (1851-1948)» («Աւետիք», Բեյրութ, 1948թ., թիւ 7-8) հոդվածը: Վեր. Տիգրան ճ. Խրլոբյանը «Ոսկեմատան Հայ Աւետարանական Միութեան Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու» Ահատրում (Բեյրութ, 1950) հանգամանորեն ներկայացնում է նաև Քեսապի և շրջակայքի հայ ավետարանական եկեղեցիների պատմությունը:

Քեսապի ուսումնասիրաց միության Բեյրութի մասնաճյուղի իրատարակած «Ալարմ Քեսապի Եւ Շրջակայքի» (Բեյրութ, 1955) հակիրճ կերպով տալիս է տեղագրական, պատմական, ազգագրական ծանոթություններ ու վիճակագրություններ:

Սիրիահայ գաղութի ձևավորման ու կազմավորման ծիրում Քեսապը տեղ է գտել ուսումնասիրողներ Գր. Գապենճյանի, Արշակ Ալարմյանի, Բյուզանդ Եղիայանի և այլոց հրապարակումներում: Սիրիահայ գաղութի պատմությանը նվիրված լուրջ ուսումնասիրություններ են հետևյալ երկու մենագրությունները՝ A. K. Sanjian, *The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion*, Harvard University Press, 1965, 3. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986:

Աղբյուրների երկրորդ խումբը կազմում են անտիպ գործերն ու արխիվային նյութերը: Մենք հայտնաբերել, օգտվել և ամբողջական հրապարակումի արժանացրել ենք մինչ այդ անտիպ մնացած ուսումնասիրական որոշ գործեր, հուշագրություններ, առատ արխիվային նյութեր ու թղթածրարներ, ինչպես Մովսես վրդ. Ոսկերիչյանի 1911-ի մարդահամարը, բժիշկ և ՀՅԴ գործիչ Ավետիս Ինճենիքյանի

«Քե սապը եւ իր Բարբառը», Մարիամ Սարամազյան-Չյուրիքյանի «Ինքնակենսագրութիւն» գործերը, Սիմոն Այանյանի 1920-ի մարդաստամարը, Մաղաքիա Պասուճյանի «Քե սապը Յայաստանում» հուշագրութիւնը, լատին համայնքի Յալեպի առաջնորդարանի, ֆրանսիական բանակի, ավետարանական համայնքի Յալեպի սթասիոնի, Բերիո թեմի Քաղաքական ժողովի փասթաթուղթերի Քեսաբին վերաբերող թղթածրարները և այլն: Օգտագործել ենք Ալպերթ Աբելյանի 1913թ. գրած «Քե սապ եւ իր Գիւղերը» պատմագագարական բնույթի փոքրիկ ձեռագիր տետրակը, որ երվանդ Յ. Քասունու առաջաբանով ու ծանոթագրութիւններով լույս տեսավ Բեյրութում՝ 2002թ.:

Ուսումնասիրութիւնն աղբյուրների երրորդ խումբը մեր հավաքագրած դաշտային նյութերն են, որոնք կարելի է խմբավորել հետևյալ ձևով.

ա. Միջավայրի ու աշխատանքի դիտում, սերտողութիւն ու նկարագրութիւն, չափագրութիւններ ու վիմագրական արձանագրութիւններ: Նշենք նաև, որ գրականութիւնն մեջ Քեսաբի նյութական մշակույթի մասին գրեթե ոչինչ չկար:

բ. Բնակավայրերի կազմութիւն, տոհմագրութիւն և տնտեսութիւնն նկարագրութիւնն հետ կապված ավանդութիւններ, ընտանեկան գրույցներ և տարեցների վկայութիւններ: Արձանագրել ենք նաև նշանակոր իրադարձութիւններին ակնատես եղած մարդկանց վկայութիւններ:

գ. Բնահյուսակն ձայնագրութիւններ և գրառումներ ոչ միայն Քեսաբից, այլ և Յայաստանի, Լիբանանի, Սիրիայի, ԱՄՆ-ի և Կանադայի տարբեր շրջաններում ապրող քեսաբցիներից: Մինչ այդ, բացի մեկ-երկու հեքիաթից, մեկ տասնյակ առած-ասացվածքներից, նույնքան խաղիկներից և Բարսեղ Կանաչյանի «Յելէ, Յելէ (Քեսաբի Պարեգ)»-ից, Քեսաբի հարուստ բնավոր մշակույթից ոչինչ ծանոթ չէր:

դ. Բարբառի հնչյունական կազմի, քերականութիւնն ու բառաշարի տարբեր շերտերը համալրող նյութերի հավաքում և ուսումնասիրութիւնն (մինչ այդ բարբառի մասին եղած ուսումնասիրութիւնները միայն համառոտ նկարագրութիւններ էին):

Վերը թվարկած նյութերը հրատարակել ենք մի շարք հոդվածներով, սիրիահայ գաղութին վերաբերող առանձին աշխատասիրութիւններում և մասնավորապես Քեսաբին վերաբերող գրքերում, որոնք ընդգրկվել են առեւակտուութիւնը վերաբերող հրատարակութիւններին ցանկում:

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Այս աշխատությունը կարևոր հավելում է արևմտահայության, մասնավորապես հայ աշխարհի ծայր հարավ-արևմտյան հայ գանգավածի մասին ունեցած պատկերացումներին վրա:

– Աշխատության արդյունքները կարևոր նշանակություն ունեն մի քանի հարանվանությունների բաժանված ազգային հավաքականությունների նկատմամբ վարվելիք քաղաքականության մշակման ու դրա իրագործման տեսանկյունից:

– Աշխատությունը համալրում է սփյուռքի առանձնահատկությունների և օրինաչափությունների վերաբերյալ մեր պատկերացումները, պարզելու սփյուռքահայ համայնքների հավաքական վարքի տիպերը քաղաքական-հասարակական և մշակութային տարբեր պայմաններում:

– Աշխատությունը կօգնի պարզելու հայկական սփյուռքի մեկուսի խմբերի գոյառմանն սպասացող վտանգները և գտնելու այդ վտանգները հաղթահարելու տեղական ու համահայկական կարելիությունները:

– Աշխատությունը 1909թ. ադետի, Մեծ եղեռնի, 1939թ. Ալեքսանդրեոսի սանջակի հետ կապված դեպքերի և 2014թ. երրորդ մեծ տեղահանությունը լույսի տակ ապացուցում է, որ Թուրքիայի համար Յայոց ցեղասպանությունը շարունակական երևույթ է, պետական քաղաքականություն, և միայն միջոց-ներն են, որ կարող են տարբեր լինել՝ ըստ ժամանակաշրջանների:

– Աշխատությունը հայ ազգագրության մեջ առաջին անգամ ներկայացնում ու գիտական շրջանառության է դնում Քեսաբի հայության հոգևոր ու նյութական մշակույթի բոլոր երեսները՝ աշխատանքի ու արտադրության տեսակները, տունն ու հարակից բաժինները, տարազը, խոհանոցը, ընտանիքի կազմությունն ու բնույթը, հասարակական հարաբերությունները, տոնակատարությունները, խաղերը, ժողովրդական բժշկությունն ու հավատալիքները:

ԱՆԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունն ունի **տեսական և գործնական նշանակություն**. տեսականորեն պատճառաբանվել են մեկուսացման դատապարտված շրջանակների ազգային ու կրոնական պատկանելությունը պահելու ընթացքում ազգագրական շատ երևույթների դերը, այլադավանության՝ քաղաքական և տնտեսական պայմաններից մղված լինելը, ազգային գաղափարախոսության դերը կրոնական հարանվանությունների բաժանված ազգային հավաքա-

կանու թյու ների միասնականության ամրապնդման և այլ բազմաթիվ դրսևորումներում:

Գիտագործնական նշանակություն և ն այն է, որ հայկական դավանանքային և գաղափարական տարբեր հավաքականությունների վարքի ու փորձառության ուսումնասիրության շնորհիվ կարելի կլինի նման հավաքականություններին համերաշխ կեցության առաջնորդել ու ավելի մեծ նպատակների, օրինակ՝ հայապահպանման շուրջ, համախմբվել:

Ուսումնասիրությունը գործնական կարևոր նշանակություն կարող է ունենալ ազգագրական շատ երևույթների՝ աշխատանքի նախկին տեսակների, վարուցանքի, տարագի, խոհանոցի, տան կառույցի ևն. համեմատական քննության համար, ինչպես նաև բանագիտության, բարբառագիտության որոշ երևույթների պարզաբանման ու ընդհանրացման ժամանակ:

Յետևաբար այս աշխատանքը հետազոտողների համար կարող է արժեքավոր աղբյուր հանդիսանալ հիշյալ տարածաշրջանի հայոց կյանքի տարբեր կողմերը դիտարկելու տեսանկյունից: Յայտնենք, որ թեմային առնչվող մեր հրատարակված աշխատությունները պարբերաբար օգտագործում են թե՛ հայ, թե՛ օտար պատմաբաններ, ազգագրագետներ, բանագետներ, երաժիշտներ և լեզվաբաններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության համար **մեթոդաբանական հիմք** են ծառայել (երբ խոսքը գաղթավայրի պատմության մասին է) փաստական ու փաստագրական հարուստ նյութի վրա կատարված պատմաբանացողական և պատմահամեմատական սկզբունքները, վերլուծական-համադրական և պատճառահետևանքային մեթոդաբանությունը:

Ազգագրական նյութի, հատկապես Քեսաբի նյութական ու հոգևոր մշակույթի մասին խոսելիս, առավելաբար աշխատել ենք դառնային դիտման, հարցման, նկարագրման, տիպաբանական, քարտեսագրման (չափագրում, գծանկար և լուսանկար), համեմատական ու մասամբ փաստաթղթերի վերլուծության մեթոդներով: Ի դեպ, կարևոր է նաև այն հանգամանքը, որ ատենախոսքը կրողն է քննության ենթակա՝ տարածաշրջանի, և՛ նրա մշակույթի:

Մեզ համար թե՛ մեթոդական և թե՛ գործնական նշանակություն են ունեցել Երվանդ Լալայանի, Արշակ Ալպոյաճյանի, Խորեն Գաբիկյանի, Բյուզանդ Եղիայանի աշխատասիրությունները, ինչպես նաև ՅՅ ԳԱԱ

հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչությունները:

Առանց բանահյուսության ու բարբառի ոլորտներն ընդգրկելու՝ Քեսաբի ազգագրությունը ներկայացնելը գրեթե անհնար է: Աշխատանքի ու կենցաղի մի շարք երևույթների հետ կապված են բազում ասույթներ, կանչեր, երգեր. ունեն բարբառային ինքնատիպ «հագուկապ» ու անվանում: Յարագատրեն արձանագրված երգային նյութերը նկարագրել եմ տվել հայտնի երաժիշտների՝ նրանց թղթային ձայնագրություններն ապահովելու համար, իսկ բարբառային առնչակից նյութերը արձանագրել, ստուգաբանել ու գրական լեզվի եմ վերածել՝ միշտ նկատի ունենալով Յրաջյա Աճառյանի, Արարատ Ղարիբյանի, Գևորգ Ջահուկյանի աշխատասիրություններն ու հայ բարբառագիտության մեթոդական ուղեցույցները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քեւսաբի և նրա հետ վարչական, թեմական, կրթական ու տնտեսական սերտ առնչություններ ունեցող Անտիոքի շրջանի հայկական բնակավայրերի և, ընդհանրապես, սիրիահայ գաղութի մասին մեր աշխատության ունեցրած սկսել են հրատարակվել 1960-ական թվականներից ինչպես գիտական հանդեսներում և զանազան ժողովածուներում, այնպես էլ առանձին հատորներով, որոնցից հարկ է առանձնացնել հատկապես «Քեւսաբ» եռահատոր աշխատությունը:

Ատենախոսությանը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնիներում և արժանացել դրական գնահատականի:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, վերջաբանից, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկերից ու հավելվածից: Առաջին գլուխն ունի երկու, երկրորդը՝ չորս, երրորդը՝ յոթ, իսկ չորրորդը՝ վեց մասեր: Հավելվածն ունի երեք մաս՝ քարտեզներ, գծանկարներ ու լուսանկարներ: Ընդհանուր ծավալը կազմում է 315 էջ (հիմնական շարադրանքը՝ 301 էջ, հավելվածը՝ 14 էջ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ բնութագրվում է թեման, որ Սիրիական Արաբական Հանրապետության մասկազմող հայաբնակ Քեւսաբ գավառակի պատմության ունեցած ազգագրության ունե է:

Քեւսաբի շրջանը, հակառակ 1909, 1915 և 2014 թվականների ամբողջական տեղահանության ներքին, 1939թ. Ալեքսանդրետի սանջակի հետ կապված իրադարձություններին, 1947թ. գանգվածային հայրենադարձությանը, պահեց իր հայկական դիմագիծը, բայց միաժամանակ սկսեց կորցնել ազգագրական վարքի բազմաթիվ յուրահատկություններ: Այդ երևույթների ընդհանուր լույսի ներքո հիմնավորվում են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, դրանց իրականացման տեսական ու մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Ներածության մեջ հանգամանորեն տրվում է սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Նշվում է, որ տպագիր և անտիպադրոսները գլխավորապես վերաբերում են հարանվանության նկարների կազմության և ու գործունեությանը կամ Քեսաբի հայոց կյանքում պատահած որոշ իրադարձությանը: Հանգամանորեն ներկայացվում են 1968թ. սկսած մեր դաշտային աշխատանքների արդյունքները՝ ազգագրության բոլոր երեսները արձանագրելը, բանահյուսությանը հավաքելը, բարբառի և լիակատար նկարագրությանը կատարելը, բառապարթերը առավել հարստացնելու և միավորելու աշխատանքները, գիտական-տեսական նախապատրաստությանը, հավաքված նյութերի գիտական ուսուցման և մասնագրությանը կատարելու երկար աշխատանքը, որոնց արդյունքը այն բազմաթիվ հոդվածներն ու բազմահատոր իրատարակության նկարներն են, որոնք ամբողջացնում են այս աշխատության համար օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՔԵՍԱԲԻ ՀԱՅԱՐԱՆՈՒԹՅԱՆ

1.1. Գաղթականության կազմությանը

Քեսաբի շրջանում հայերի գոյության և հնագույն վիճակի արձանագրությանը 18-րդ դարի է, սակայն Քեսաբի տարածքում հայերի հաստատվելու մասին պատմվող ավանդությանը, տոհմային գրույցներն ու մանավանդ շրջանում իրենց սրբությանը երբեք չկորցրած սրբավայրերը՝ «կիրիցիկ»-ները (խոհարհված եկեղեցիները) խոսում են շրջանում հայերի ավելի վաղ ժամանակներում հաստատված և ինչու մասին:

Օսմանյան իշխանության Սիրիա մտնելուց հետո (1517թ.) թուրքմեն գաղթական հորդաների՝ Անտիոքի տարածաշրջանում նոր բնակավայրեր գաղթելու ժամանակ բազմաթիվ հայկական բնակավայրեր չքացան: Հայերը կամաց-կամաց համախմբվեցին գլխավորապես Լեռնային ու մեկուսի շրջան-ներում: Անտիոքի շրջանի հայ հոծ գաղթականության այսպիսի վերաբաշխումով գոյացան ինչպես Քեսաբի, այդպես էլ նույն տարածաշրջանում 18-19-րդ դարերից արդեն ծանոթ մյուս բնակավայրերը՝ Սվեդիան, Բեյլանը և այլն:

Համառոտ ներկայացվում է շրջանի հայության պատմությունը մինչև 1832թ., երբ Եգիպտոսի օսմանյան կառավարիչ Մուհամմեդ Ալիի որդի Իբրահիմ փաշայի զորքերը գրավեցին Սիրիան: Քեսաբը համարվում էր Անտիոքի, երբեմն էլ՝ Ջըսըր Շուղուրի գավառների (կազա) ենթակա Օրդուի գավառակի (նահիե) գյուղերից: Հայտնի է, որ Անտիոքն ու Ջըսըր Շուղուրը անվանապես ենթակա էին Հալեպի նահանգին (վիլայեթ). նրանց կառավարիչներին նշա-

Նակում էր սուլթանը, ում էլ հաշվետու էին: Իրականում, Քեսաբը և Օրդուի գյուղախմբի մյուս հայկական գյուղերը կախյալ էին Քեսաբի համապատասխանաբար արևելքում, հարավ-արևելքում և հարավում գտնվող Յայլա դաղի կամ Օրդուի, Բայիրի ու Բուջակի թուրքմենաբնակ շրջանների աղաներից, որոնք հաճախ հակամարտության են ներթիվեցնում էին: Քեսաբցիները երբեմն օգտվում էին այդ հակամարտության ենթերթում: Ել՝ տուժում:

1.2. Տարածքը, բնակչությունը և բնակավայրերը

Քեսաբի շրջանի հայկական բնակավայրերը գտնվում են Կասիոս լեռան (բարձրությունը՝ 1750 մ) հարավային լեռնային գոգավորությունների վրա ու ձորերում: Շրջանի արևմուտքը Միջերկրականի ծովափն է՝ գրեթե անհաղթահարելի և ուղղահայաց լեռնային խիստ զանազան լեռնաշղթաներով: Դեպի ծով ելքի միակ մասն էլի տեղը Կարադուրան գյուղի փոքրիկ ծովածոցն է:

Շրջանի բնակավայրերը բերում ենք արևելահայերեն տառադարձությամբ, փակագծում տալով նաև արևմտահայերեն եւ բարբառային տարբերակները, սալա՝ 1964թ. պետական հրամանագրով տրված արաբերեն անունը. այսպես՝ **Քեսաբ** (Քեսաբ, բրբռ.՝ Քէ՛սուօպ, արաբ.՝ Բասապ), **Սև աղբյուր** կամ **Կայ աղբյուր** (Սեւ Աղբիւր կամ Գայաճըգ, բրբռ.՝ Սիվաղբուօր, արաբ.՝ Սախրա), **Ներքի գյուղ** կամ **Էսգյուրեն** (Եսկիւրէն, բրբռ.՝ Նըրքը Գիէղ, արաբ.՝ Աղլալ), **հայիր** (համարվել է Ներքի գյուղի թաղերից մին), **Չինարջըկ** կամ **Չինար** (Չինարճըկ, բրբռ.՝ Չընուօր, արաբ.՝ Այն Էլ-Տըլալէ), **Չակալ ջըկ** (Չագալճըգ, բրբռ.՝ Չագալճօգ, արաբ.՝ Ղագալէ), **Դուզաղաճ** (Տուզաղաճ, արաբ.՝ Ծաճարա), **Քեորքյուն** (Քէօրքիւնէ, բրբռ.՝ Քուրքունու, արաբ.՝ Ռապուէ), **Էքիզուլուք** (բրբռ.՝ Էքուզուլօգ, արաբ.՝ Նապէյն), **Կարադուրան** (Գարատուրան, բրբռ.՝ Գէ՛րէ՛տըրուն, արաբ.՝ Սամրա), **Պաշորտ** (այժմ՝ լքված), **Վերի Բաղճաղազ** եւ **Վարի Բաղճաղազ** (Պաղճաղազ, բրբռ.՝ Վըրը Պաղ, Նըրքը Պաղ, արաբ.՝ Սուշրիֆէ) գիւղակները:

Բնակավայրերը ներկայացվել են իրենց աշխարհագրական դիրքով, անվան տարբերակներով ու դրանց ստուգաբանությամբ, հարանվանական բաժանումներով, եկեղեցիներով, դպրոցներով, միություններով, լքված ու գործող գերեզմանատներով, հնավայրերով ու հատկապես գյուղի տարածքում գտնվող ու տեղի հայոց պաշտամունքային ոլորտում մտնող սրբատեղիներով՝ «կիղիցիկ»-ներով:

1893թ. Քեսաբի շրջանի բնակչության ընդհանուր թիվն է 9000 մարդ: 1895-1896թթ. արդուլ համիրյան բռնություններին և 1909թ. աղետի հետևանքով մեծ թվով քեսաբցիներ հեռանում են շրջանից: 1911թ. շրջանը ուներ 1157 տուն կամ 6115 մարդ:

հայ բնակչությունը: 1914թ., ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի, ամբողջ շրջանն ուներ 8736 բնակչություն: 1920թ., Մեծ եղեռնից վերապրածների թիվն է 727 տուն կամ 2369 մարդ: 1947թ. հայրենիք են տեղափոխվում 577 տուն կամ 2407 անձ: Հայրենադարձություննից հետո հայ բնակչության թիվը երբեք չի անցել 1500 մարդուց:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՔԵՍԱԲԻ ՇՐՋԱՆԸ 19-Դ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՈՐ

2.1. Հարանվանական բաժանումներ և ազգային զարթոնք

1832թ. Եգիպտոսի Իբրահիմ փաշայի գործերը գրավում են Սիրիան: Վերացվում են քրիստոնյաներից գանձվող ծանր տուրքերն ու սիփահիների կամայականությունները, նվազում է թուրքմեն աղայական ընտանիքների ազդեցությունը հայերի վրա: Քեսաբի շուկան անօրինակ վերելք է ապրում: Գյուղատնտեսությունն ու խաշնարածությունը զարգանում են, գյուղերը՝ բարգավաճում: Արհեստները նույնպես մեծ վերելք են ապրում: Քեսաբում գոյանում է շուկայի միջոցով հարստացած մի խավ: Քեսաբի և գյուղերի միջև կենցաղի հակադրություն է առաջ գալիս:

1842թ. օսմանյան իշխանությունները վերահաստատվում են ողջ Սիրիայում: Շուկայի խավը շահագրգռված էր իր դիրքն ու շահերը պաշտպանելու հրամայականով: Շրջան մուտք են գործում ամերիկացի ու կաթոլիկ միսիոներները: 1853թ. կազմավորվում է բողոքական հարանվանականը՝ «փրո-թեսթան միլլեթը», 1857թ.՝ «կաթոլիկ միլլեթը»: Երկու նոր «միլլեթ»-ներում սկսվում է եկեղեցաշինական ու դպրոցաշինական մեծ շարժում: Հսկած է արձանագրում մանավանդ ավետարանական համայնքը:

1892թ. շրջան է մտնում Հնչակյան կուսակցությունը: Նրա ազգային և սոցիալիստական գաղափարախոսությունն իր հովանու տակ է առնում հարանվանական թշնամանքով լարված ժողովրդին: 1896թ. Չեյթունի ապստամբության ավարտից հետո հնչակյան գործիչներն անձնատուր են լինում: Հակառակ տրված խոստումներին՝ իշխանությունները շրջան մտնելով՝ խժոժություններ ու ձեռքակալություններ են կատարում: Ժողովուրդը դիմում է լատին ֆրանչիսկյան վարդապետների հովանավորությանը, որոնք իրենց զորավիգ ունեին Անտիոքի և Լաթաքիայի ֆրանսիական և իտալական հյուպատոսներին: Քեսաբում կազմվում են երկու լատին այլ աճես համայնքներ:

2.2. 1908թ. Օսմանյան սահմանադրություննից հետո

1909թ. գարնանն սկսվում են կիլիկյան ջարդերը: Ապրիլի 23-25-ին Օրդուից Քեսաբի շրջան մտնող թուրքմեն, թուրք, քուրդ և արաբ ավարառուների թիվը 30 000-ի էր հասնում: Սրանք մտնում են հայերի տները, կողոպտում, ինչ հնարավոր է հախչ տակել՝ տանում, իսկ մնացյալը՝ կրակի տակ իս: Փախտական քեսաբցիները, երրորդ օրն անցնելով Լաթաբիայի մութասարիֆոթյան սահմանները, հավաքվում են Բասիթի ծովափին, որտեղից ֆրանսիական Վիգեր, ժյուլ Ֆերի և Միշըլե նավերով տեղափոխվում են Լաթաբիա: Լաթաբիա հասած փախտականների թիվը հասնում էր մինչև 7500-ը:

Աղետից անմիջապես հետո վերաշինության հսկայածավալ աշխատանքներ են սկսվում: Կրթական գործը առավել ուշադրության է արժանանում: 1850-ական թվականներից այս ոլորտում հիմնական դերը ստանձնել էր նոր կազմավորված ավետարանական համայնքը: Ըստ «Արեւելեան Մամուլ»-ի (1906թ., թիվ 50, էջ 1228-1231)՝ 1906թ. շրջանն ուներ 1318 տուն գուտ հայ բնակչություն, որոնցից առաքելականները՝ 678 տուն, 2 դպրոց, ավետարանականները՝ 531 տուն, 11 դպրոց, կաթոլիկները՝ 66, լատինները՝ 43 տուն. վերջին երկու համայնքները միասին ունեին երեք դպրոց: Ավետարանականները միայն Քեսաբ ավանում ունեին երկու տարրական, մեկ միջնակարգ և երկու (տղաների և աղջիկների համար) երկրորդական վարժարաններ (high school): 1914թ. սրանց աշակերտության ընդհանուր թիվը 900 երկսեռ աշակերտ էր, մինչդեռ 1910թ. բոլոր դպրոցների աշակերտությունը 1100 հոգի է եղել:

1909թ. աղետից հետո սկսված վերականգնման աշխատանքներում աննախընթաց կարևորություն է տրվում **ազգային դաստիարակությանը**: Ազգային, այսինքն՝ առաքելական համայնքի վարժարանները լուրջ բարելավում են արձանագրում: Փորձ է արվում դպրոցի նկատմամբ ժողովրդի շահագրգռությունն ավելացնել, ուսման ու դպրոցի հանդեպ սեր առաջացնել և զգուշացնել հայունք անը հեռու մնալ նորարականների ապագային դաստիարակությունից: 1910թ. ստեղծվում է Քեսաբի Ուսումնասիրաց ընկերությունը: Վերջինս, արդար քննադատությամբ հանդես գալով, առաջարկում է հիմնական փոփոխության իր ծրագիրը, այն է՝ **կրթության ու դաստիարակության հիմնական նպատակը դարձնել ազգայինը և ոչ թե հարանվանականը, միացնել գյուղերում գոյություն ունեցող մեկից ավելի դպրոցներին, հարանվանական իշխանություններին հեռացնել կրթական գործից, շրջանի բոլոր նախկրթարաններից եկող շրջանավարտների համար Քեսաբում բացել մի բարձրագույն նախակրթարան կամ լրիվ միջնակարգ դպրոց:**

Բայց վրա է հասնում Մեծ եղեռնը: Քեսաբցիները երեք տարբեր քարավաններով տարագրվում են Սիրիայի խորքերը: Առաջին խմբի արտոյալները հասնում են Յորդանան: Տարագրվածների շուրջ կեսը զոհվում է: Երկրորդ խմբին ցրում են կենտրոնական Սիրիայում՝ Յամայից դեպի Նաբլյու մինչև Թատմորի կողմերը: Այս խմբում ավելի շատ կորուստներ են լինում: Վերջին խումբը բավական երկար է մնում Յամայում, որտեղից Յալեպի վրայով քշվում է Մեսքենե ու այնտեղից էլ՝ դեպի Դեր Զոր ու ավելի հեռուները: Այս խմբից քչերն են վրկվում:

2.3. Տուև Լոպարձ և Ֆրանսիական գաղութարիություն

1918թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի գիևադադարը կնքելով՝ թուրքերն ընդունում են իրենց պարտությունը:

Առաջին վերապրողները Քեսաբ են վերադառնում Զաուրանի, Դամասկոսի, Նաբլյի, Յոմսի, Յամայի ու ընդհանրապես Սիրիայի հարավային շրջաններից, ապա գալիս են Մեսքենեից ու Յալեպի կողմերից: Կարաղուրանցիները Յորդանանից տեղափոխվում են Եգիպտոսում Պոր Սաիդի հայոց գաղթականը, որտեղից 1920թ. ամռան վերջին՝ մուսալեռցիների հետ ծովով, իսկ ոմանք էլ ցամաքային ճանապարհով վերադառնում են Քեսաբ:

Աստիոքից մինչև Լաթաբիա անիշխանություն էր տիրում: 1920թ. ամռանը քեմալականները հայտնվում են շրջանում ու լուրջ գրգռություններ սերմանում շրջանի թուրքմենների և սուլենի արաբների միջև:

1920թ. օգոստոսին Ֆրանսիան լուծարում է Յայկական լեգեոնը: Քեսաբցի վերջին լեգեոնականները Քեսաբ են գալիս: Կամավորները և ժողովրդի ղեկավարները այլևս անհետնագելի են համարում Քեսաբի ինքնապաշտպանության գործը կազմակերպած վարելու հարցի լուծումը: Անմիջապես գումարվում է մի ընդհանուր ժողով, որ հռչակում է **Չիևկորական իշխանություն**: Նա Քեսաբի երեք հարանվանություններին երևելի անձերից նշանակում է վեց հոգիանոց **Ազգային միություն**: Ազգային միության պարտականությունն էր գյուղերի հոգևոր և կրթական գործերի վերակազմակերպումը, որբերի և այրիների կարիքների բավարարումը, նորակազմ ընտանիքների և վերադարձողների տեղավորումը, պարենի ապահովումը, կալվածքների օգտագործման և ժառանգական հարցերի լուծումը:

1920թ. օգոստոսին Աստվածածնի տոնի Մեռելոցի օրը մի մեծ ամբոյս հարձակում է գործում՝ պատժելու Քեսաբցիներին, բայց Վարի Բաղջաղազի մոտ չարաչար պարտության է մատնվում ու նահանջում:

1922թ. ամռանը Ֆրանսիական գործերը մտնում են Աստիոք ու վերացնում թուրքական ապստամբական որջերը: Քեսաբ

մտնելով՝ Ֆրանսիացիները լուծարում են Ազգային միությանը, ու Քեսաբը սանջատելով Օրդուից՝ նրան տալիս են Ալեքսանդրետի սանջակում առանձին գյուղախմբի վարչական կենտրոնի կարգավիճակ:

1930-ական թվականներին պարզ են դառնում Ալեքսանդրետի սանջակը Սիրիայից սանջատելու թուրք ազգայնամուլների նկրտումները: Հակառակ հզոր ընդդիմության՝ հենվելով 1938թ. հուլիսի 5-ի հանրաքվեի կեղծված արդյունքների վրա և շրջանցելով Ազգերի Լիգան՝ Ֆրանսիան համաձայնվում է, որ Թուրքիան գործեր մտցնի Ալեքսանդրետի սանջակ՝ այնտեղ «կարգու-կանոն» - պահպանելու համար: 1938թ. օգոստոսին Ալեքսանդրետի սանջակը հռչակեց Հաթայի պետություն: Սանջակը կատարյալ թուրքացման ընթացքի մեջ էր: Հայեր, արաբներ, հույներ, քրդեր, չերքեզներ սկսեցին հեռանալ սանջակից: Ծայր է առնում զանգվածային արտագաղթը: Ալեքսանդրետի, Բեյլանի գյուղերի, Կրըկխանի, Անտիոքի և մյուս շրջանների հայերն անցնում են Լիբանան և Սիրիա: Մուսավեռնու Քեսաբը սպասում են: Ֆրանսիացի պատգամավորները և մտավորականները, հայ ազգային ու եկեղեցական մարմիններն ու կաթոլիկ եկեղեցին ամեն ջանք թափում են՝ փրկելու հայկական այս երկու շրջանները: Սիրիայի և Թուրքիայի նոր սահմանագծումի առաջարկներում Թուրքիան ակամա հրաժարվում է Բայիրից, Բուջակից և Ալեքսանդրետի սանջակին մաս կազմող Քեսաբից: Հաստատվում է նոր սահմանը, որով Քեսաբը մնում է սիրիական պետության կազմում:

2.4. Քեսաբը Սիրիայի անկախացումից հետո

1946թ. ապրիլի 17-ին ավարտվում է Սիրիայում Ֆրանսիական գաղութատիրությունը:

Նույն տարին զանգվածային հայրենադարձության ավետիսը Քեսաբի շրջանում մեծ ուրախությունն ու խանդավառությունն է ստեղծում: Ժողովրդի մեծամասնությունը ներգաղթելու պատրաստակամությունն է ցուցաբերում: Դառնությունը իր պատճառները.

1. Այն բոլորն հայրենասիրությունն էր, իր հետագա ճակատագիրը Հայաստան երկրին կապելու գիտակցությունը, որով համակվել էր Քեսաբցին դեռևս 1890-ական թվականներից: Վերջիվերջո Քեսաբն էլ գաղթավայր էր, իսկ հայը պետք է ապրեր ու հարատևեր միայն իր հայրենիքում:

2. 1939թ. նոր սահմանագծումով շատերը կորցրել էին իրենց լավագույն արտերը, Քեսաբի շուկայի եռուզեռն ու նշանակությունը էապես նահանջել էին: Ծառ արհեստավորների անգործության էին մատնվել:

3. Երկրորդ աշխարհամարտին ստեղծված տնտեսական ճգնաժամը շարունակվում էր. աշխատանք չկար, իսկ հեռանկարը անորոշ էր:

4. Քեսաքցիները Սիրիայի ողջ հայության նման ցնծությամբ ողջունեցին Սիրիայի անկախությունն ու ֆրանսիական ուժերի հեռացումը Երկրից, սակայն նորանկախ երկիրը նոր մտահոգություններ էր բերում իր հետ: Վաղվա Սիրիայում ի՞նչ պիտի լիներ հայության ճակատագիրը, ոչ ոք չգիտեր:

2407 Քեսաքցի ներգաղթողներ 1947թ. հունիսի 22-ին Քեսաքից փոխադրվեցին Բեյրութի նավահանգստի կից Կարանտիևա թաղամաս: Հունիսի 25-ին «Պոբեդա» նավը, Քեսաքցիներին և այլ հայրենադարձների վերցնելով, ճանապարհընկավ:

Հայրենադարձվեց Քեսաքի շրջանի այդ օրերի ընդհանուր բնակչության երկու երրորդը: 1955թ. Քեսաքում հայերի թիվը «Ալպում»-ը 1623 հոգի է նշում, Լիբանանում և Սիրիայում գրված Քեսաքցիների թիվը՝ 1251, Հյուսիսային Ամերիկայում՝ 560, Հարավային Ամերիկայում՝ 320, ընդամենը՝ 3763 հոգի:

Հայրենադարձության հետևանքով Քեսաքը հայտնվեց բավական մտահոգիչ վիճակում. ներգաղթի օրերին մեկնողների անշարժ գույքը խորհրդանշական գներով առնող մարմինը չկարողացավ մնացողների միջև արդար բաժանում կատարել ու Սիրիայում և Լիբանանում մնացող Քեսաքցիներին հող տրամադրել, ինչի հետևանքով շատերն արագաղթեցին:

Սակայն որոշ փոփոխություններ այնուամենայնիվ դրականորեն անդրադարձան Քեսաքում մնացած հայոց կյանքի վրա: Այսպես՝

1. Հայրենադարձությունն ից հետո տեղի և դրսի քեսաքցիները ջանացին զբոսաշրջության և ամառանոցի ցանկալի վայր դարձնել Քեսաքը: Լաթաքիայի, Դամասկոսի և հատկապես Հալեպի հայերը աշխատեցին այդ ուղղությամբ:

Ամառանոցային պահանջները նպաստեցին, որ մինչև 1980-ական թվականները շրջանի բոլոր գյուղերում ավելի արագ թափով բարելավվեն կյանքի և աշխատանքի պայմանները, քաղաքի ու գյուղի տարբերությունները գրեթե վերանան:

2. Հիմնովին փոխվեց գյուղատնտեսությունը: Շրջանն սկսեց զբաղվել պողամշակությամբ: Դրան նպաստեցին թե՛ ճանապարհների և փոխադրամիջոցների առկայությունը, որով բերքը այգիներից փոխադրվում էր Լաթաքիաում Հալեպ, թե՛ գյուղատնտեսական աշխատանքներում մեքենաների օգտագործումը, մրգերի պահպանման համար մեծ սառնարանների կառուցումը, արտեզյան ջրհորների բացումը և այլն:

Այս ուհանդերձ, արաբ-իսրայելական պատերազմներն ու ներքին ցնցում-ները նպաստեցին հատկապես երիտասարդ տարրի՝ երկրից հեռանալուն:

Այս ժամանակաշրջանում Քեսաբի հայ բնակչության թիվը երբեք չհատեց 1500 մարդու սահմանը:

Քեսաբցիները մեծ սփյուռք ունեն: Նրանք կազմակերպված համայնքներ ունեն մասնավորապես Լիբանանում և ԱՄՆ-ում, որտեղ հիմնել են Ուսումնասիրաց միության մասնաճյուղեր ու տանում են հայրենակցական, բարեսիրական, կրթանպաստ ու հրատարակչական աշխատանքներ: Նրանք աշխուժորեն մասնակցում են իրենց գաղութների ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային ու քաղաքական կյանքին: ԱՄՆ-ի, Կանադայի, Լիբանանի և ԱՄԷ-ի քեսաբցիները հաճախ են հենարան դառնում Քեսաբի իրենց հայրենակիցներին, եկեղեցիներին, դպրոցներին և մյուս հասարակական կառույցներին:

Քեսաբը գյուղատնտեսության (հատկապես պտղամշակության ու բան-ջարաբուծության) և զբոսաշրջության ոլորտներում զարգացման վերընթաց ուղու մեջ էր: Այն սիրիահայ փոքրիկ, բայց լավ կազմակերպված համայնք էր, երբ 2011թ. մարտին սկսված սիրիական տագնապը վերաճեց պատերազմի: Յյուսիսային Սիրիայի հայության համար պատերազմը շատ մտահոգիչ դարձավ, երբ չափավորական շարժումներին փոխարինեցին իսլամական ծայրահեղական խմբավորումները, ու հետզհետե բացահայտվեցին Թուրքիայի դերակատարությանը և նկրտումները: Թուրքիան պահանջում էր Սիրիայի հյուսիսում ազատ գոտի ստեղծել՝ իբրև թե սիրիացի փախտականներին պասսապորտելու համար: Լաթաքիայի նահանգի հյուսիսում և հյուսիս-արևելքում՝ Քեսաբի հայկական շրջանի հարևանությամբ են գտնվում 16-րդ դարում առաջացած Բայիրի և Բուջակի թուրքմենական շրջանները: Քեսաբ-Լաթաքիա մայրուղու ձախ կողմում Բայիրն է, աջում՝ Բուջակը: 2012թ. հունիսի 8-ին ընդդիմադիրների ձեռքն անցան Բայիրի շրջանի թուրքմենական գյուղերը: Ստամբուլում խոսվում էր թուրքմենական շրջանի կամ Ձեբել Թուրքմենի ինքնավարության մասին:

2014թ. մարտի 21-ին՝ ուրբաթ օրը՝ ժամը 5:45-ին, արկեր ու հրթիռներ տեղացին Քեսաբի և շրջանի արևելյան գյուղերի վրա: Սրանց ընկերացավ նաև թուրքական տարածքում դիրքավորված դիպլոկահարների ստեղծած սարսափը: Ամեն ոք խուճապային փախուստի դիմեց դեպի արևմուտք՝ Էթիզօ-լուքի ճանապարհով Լաթաքիա հասնելու համար:

Մարտի 23-ին Քեսաբի ամբողջ շրջանն ընկավ Թուրքիայի անմիջական հովանավորությամբ վայելող ծայրահեղ իսլամականների տիրապետության տակ:

Միրիական բանակը հունիսի 15-ին ազատագրեց շրջանը: Քեսաբցիները վերադարձան իրենց տները, որտեղ գտան ավելի կորուստ ու ավեր, քան կարող էին երևակայել. ամենուրեք կողոպուտ, հրդեհ և ավեր: Եկեղեցիներն ու գերեզմանատները պղծվել էին, տները՝ մեկ առ մեկ բացվել ու կողոպտվել: Այսօր, 2016թ. կեսին, Քեսաբի նախկին բնակչության շուրջ կեսը դեռևս տուև չի վերադարձել, կան նաև հեռավոր երկրներ արտագաղթողներ: Պատերազմական վիճակը երկրում մշարունակվում է:

Քեսաբի հետեղեռնյան կրթական կյանքը արտացոլում է Քեսաբի հարսնական և գաղափարական-կուսակցական բաժանվածությունը: Ազգային միության հիմնածավե տարանական-առաքելական միացյալ վարժարանների փակվելուց հետո վերաբացվում են հարսնական նախակրթարանները: Հակառակ այս փաստի՝ Քեսաբի Ուսումնասիրաց միությունը 1925թ. բացում է Քեսաբի Ուսումնասիրաց երկրորդական վարժարանը, որը հավանում էր լինել ոչ հարսնական, ազգային ծրագրով միջնակարգ-երկրորդական դպրոց (high school)՝ շրջանի բոլոր նախակրթարանների շրջանավարտների համար: Հարսնական և կուսակցական հակամարտությունների պատճառով նախակրթարանների թիվն ավելանում է, բայց ոչ մի կողմը բավարար աչակերտություն և չապահովվելու պատճառով չի կարողանում լրիվ միջնակարգ-երկրորդական վարժարան իրագործելու խնդիրը լուծել: Ուսումնասիրացը չի կարողանում պահել իր դասարանները ու միանում է Միացյալ վարժարանին:

Մինչև 1940թ. շրջանում գործում էին 26 նախակրթարաններ և մանկապարտեզներ կամ ծաղկոցներ՝ 1280 երկսեռ աչակերտներով: Սրանք մտնում էին ազգային (առաքելական), ավետարանական, լատինաց-կաթոլիկ, ՀԲԸՄ-ի ազգային-նապատրաստող, Միացյալ-Ուսումնասիրաց վարժարանների ցանցերի մեջ:

Հայրենադարձության հետևանքով բնակչությունը նվազում է, մի շարք դպրոցներ իրար հետևից փակվում են: Միջնակարգ-երկրորդական վարժարան ունենալը միշտ օրակարգի մեջ էր: Միջնակարգ ուսման համար ծայրառած արտագաղթը կասեցնելու նպատակով և քեսաբցիների խնդրանքով 1965-ին Քեսաբում հիմնվում է պետական միջնակարգ վարժարան, որը 1977թ. վերածվում է միջնակարգ-երկրորդական վարժարանի: Աչակերտության 85 տոկոսը տեղացի հայեր էին: Դպրոցը հայերենի դասավանդություն և չունեի, այդ պատճառով էլ շատ ծնողներ նախընտրում էին

իրենց գավակներին ուղարկել Յալեպի հայկական ճեմարանները:

Քեսաբի դպրոցները ավտոբուսներով ապահովել ու պատճառով 1981թ. գյուղական բոլոր դպրոցները ավելորդ են դառնում ու փակվում են: Քեսաբի շրջանում մնում են երեք նախակրթարաններ միայն՝ ազգային, ավետարանական ու կաթոլիկ, երեքն էլ՝ գավառակի կենտրոն Քեսաբ ավանում:

1990-ական թվականներին Քեսաբի Ուսումնասիրաց-Միացյալ նախակրթարանը աշակերտության թվի աճ է արձանագրում, մինչդեռ մյուս երկու նախակրթարանները կորցնում են իրենց հայ աշակերտության զգալի մասը, ստիպված, իբրև աշակերտ ընդունում են տեղի արաբ ընտանիքների գավակներին: 2003թ. պարտադիր կրթությունը իննամյա դարձնելու պետական օրենքից օգտվելով՝ Ուսումնասիրացն ունեցավ միջնակարգ բաժին, իսկ 2005-ին՝ լրիվ միջնակարգ բաժին, որը 2008թ. տվեց իր առաջին շրջանավարտներին: Բոլոր համայնքները, տարբեր միութենական կենտրոնները և ժողովուրդը ողջունեցին Ուսումնասիրաց ճեմարանի բացումը, որտեղ Քեսաբցի հայ աշակերտի համար հավելյալ վեց տարի հայեցի դաստիարակություն էր ընձեռնվել: Իրականացել էր հարյուրամյա երազանքը:

**ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

3.1. Երկրագործությունը

Աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձվել Քեսաբի շրջանի հայ բնակչության հիմնական զբաղմունքին՝ երկրագործությանը: Նկարագրվել են գյուղացու՝ մի պատառ մշակելի հող ունենալու, հողը քարքարոտներից ու մացառուտներից ազատելու և բնության տարերքներից այն պաշտպանելու հսկա աշխատանքը, մի կում ջուր ստանալու համար նրա ձեռնարկած հնարքները: Ներկայացվել են ցանքի հիմնական տեսակները, ցանք կատարելու կերպերը, հունձքի ու կալի աշխատանքները, գործիքները, աշխատանքային ծեսերն ու հավատալիքները: Այգեգործության մեջ հիմնական ծառատեսակներն էին ձիթենին, որթատունկն ու թզենին: Նկարագրվել են բերքից տարատեսակ մթերքներ պատրաստելու աշխատանքները: Գյուղացին իր կարասները լցնում էր ձեթով, ձիթաստղով, ռուպով, իսկ ամբարները՝ չոր թուզով: սրանք սննդի երկրորդ կարևոր մթերքներն էին: Ավելացած բերքը ծառայում էր ապրանքափոխության համար:

Եկամտաբեր գլխավոր արտադրություն են ներկայացնում որի ողջ բերքի ստանձնումը ֆրանսիական «Ռեժի» ընկերության մենաշնորհն էր: Կարևոր

արտադրատեսակներից էր նաև դափնու ձեթը, որն օգտագործվում էր օճառի արդյունաբերության մեջ:

3.2. Անասնապահությանը ունը

Կաթնատու հիմնական կենդանին կովն էր, որից քեսաբցին ապահովում էր առօրյա հիմնական սնունդը՝ կաթն ու մածուկը, մթերում էր յուղ ու պանիր և այլն: Կովը ընտանիքի անդամն էր համարվում: Կային նախիր ունեցող մեծ ընտանիքներ: Տարեկան մեկ-երկու ավելորդ երիւնջը գյուղացու համար դրամական եկամուտի աղբյուր էր: Տարին գոնե երկու մսացու անասուն պետք էր ունենալ: Ամեն ընտանիք ուներ իր հավանոցը: Ոմանք էլ մեղվի մեկ-երկու փեթակ ունեին:

Եկամտաբեր էր համարվում նաև շերամաբուծությունը և խաշնարածությունը: 19-րդ դարի վերջերից մետաքսի արդյունաբերության մենաշնորհը իրենց ձեռքն էին վերցրել Սվեդիայի և Աստիոքի վաճառականները: Այսուհանդերձ, Քեսաբում ևս տեղական սպառման համար աարշում (**արքուսեմ**) էր արտադրվում:

Խաշնարածությամբ զբաղվել են բազմանդամ ու սակավ հող ունեցող ընտանիքները, կային 500-ից մինչև 1000 գլխի հասնող այծերի հոտապահող ընտանիքներ:

3.3. Արհեստները և առևտուրը

Այս խատույնի մեջ հատուկ բծախնդրությամբ խոսվում է տնայնագործական արհեստների մասին: Գյուղացի մարդն ինքն իր ձեռքով էր պատրաստում արտի, պարտեզի, տան ու խոհանոցի, թոնրատան ու գոմին անհրաժեշտ փայտե գործիքները: Գյուղացի կինը պատրաստում էր շերամաբուծության մեջ անհրաժեշտ թթենու ոստից հյուսված խաիրներն ու թրիքե գուռերը: Կնոջ գլխավոր զբաղմունքներից էր նաև թել քաշելը: Խոզակից, այծի մազից, ոչխարի բրդից նատարբեր հյուսվածքների թել էր քաշում՝ կարի և ասեղնագործության մեջ գործածելու համար: Նահյուսում էր մազե պարան, բրդե գուռ էլ պա, վերարկու, ելակ, մուճակներ, որոնց վրահլ ունեներ էր շարում: Գյուղացի կնոջ պարտադիր գործերից մեկն էլ կարուձևն էր: Նա կապում էր տան անկողինները, վերմակներն ու բարձերը, կարում վարագույրները, իր ու ընտանիքի մյուս անդամների ներքին ու արտաքին բոլոր հագուստները: Դերձակը կարում էր միայն այրերի արտաքին հագուստները: Ասեղնագործելը (**խարճ բե՛-նի**) կանանց ամենից սիրելի զբաղմունքն էր:

19-րդ դարի կեսին շուկայի զարգացման հետ զարգանում են շուկայական արհեստները. արհեստանոցները գլխավորաբար բավարարում են գյուղատնտեսական միջավայրի կարիքները: Քեսաբ ավանում իրենց արհեստա-

Նոցներն ու նեխն երկաթագործները, գինագործները, պղնձագործները, կլայեկները (արծնապատողները), կոշկակարները, թամբագործները, պայտարները, գուլպայագործները, դերձակները: Կային մսագործներ, մեկ-երկու փռասան (հացագործ), խոհարար և անուշավաճառ (հալվաճի): Գործում էին մի քանի սրճարաններ ու ճաշարաններ:

Շուկան ուներ իր ջորեպանները, բեռնակիրները, ջրկիրները և մուկները:

Տարագրություներից վերադառնալուց հետո՝ մինչև հայրենադարձությանը, արհեստանոց են ունեցել նաև ոսկերիչները և ուսանկարիչը:

Ատաղծագործները, տախտակագործները, որմնադիրներն ու քարկոփները արհեստանոց չուներին. նրանք աշխատում էին այնտեղ, որտեղ գործ կար, իսկ գործերն իրենց եղանակն ունեին:

Եղել են նաև ջաղաց պաններ, փայտագործներ, ածխագործներ, ծովից աղ հավաքողներ, գինեպաններ, կիրվառողներ: Քեսաբցիների պատմած հեքիաթներում կլայեկի աշկերտն ու ջաղաց պանը շատ են հանդիպում:

Քեսաբի շուկան բավարարում էր ոչ միայն ներքին սպառման կարիքները, այլև վարում էր շրջանի գյուղատնտեսական արտադրությունները հավաքելու և արտահանելու գործը: Այդ աշխատանքն անում էին առևտրական-կապալ առուները՝ սարրաֆները, որոնց վարած առևտրի կերպից էլ կախում ունեին շուկայի կենսունակությունն ու ազդեցությունն ոլորտը: Գյուղացին ընդհանրապես միամյա ժամկետով վերցրած ապրանքի կամ փողի դիմաց խոստանում էր վաճառականին տալ իր բերքը: Գյուղացին տարեկան եկամուտի առնվազն չորս աղբյուր էր ունենում՝ ծխախոտը, շերամը, դափնեձեթը և ցանքից ու այգուց ավելացած մթերքը:

Շուկայում առհասարակ գործածում էին օսմանյան պետության չափերն ու կշիռները: Երկարության և համար գործածվում էր հայկական կանգունը (**կե'նկեօն**): Մի շարք պարկեր ու ամաններ չափամանի դեր էին կատարում և դրանցով էլ առևտուր էին անում, ինչպես՝ **տե'արկեկ**, **քօրց**, **խարալ** պարկերը, **սուլ ուօկ** (կոտ), **սընտաղբեկ** (ծեղով հյուսված տաշտ), **արղեևն**, **քիևփեկ իկ** արղնձե մեծ ու միջակ կաթսաները, նաև տարբեր չափի արղնձե դուրլերը և այլն:

Գյուղական արտադրությունների և անասունների առուծափ սակարկության մեջ (**սպգուօր**) տարածված էր **գամապր սպգուօր** ձևը, որը նշանակում էր մոտավոր կերպով գին կտրել:

Քեսաբցիները փողին **կուսուր** (կոտոր) են ասում: Օսմանյան ոսկերդարամին **դըղեն** (դեղին) և **կե'րմեր** (կարմիր) անու-

ններն են տվել, իսկ թղթադրամների միավորը **թողթ** (թուղթ) են անվանել:

Գյուղերում առևտուրն առհասարակ ապրանքախոխանակու-թյամբ էր կատարվում: Գյուղական առօրյա պետքերին հասնում էր փերեզակը (**փորիզեկ**), որ շաբաթը մեկ-երկու անգամ պտտում էր գյուղերով: Փերեզակից առած պետքերի դիմաց նրան տալ իս էին ձու, անասունի մորթի, աքլ որ, բարձի հարմար փետուր, շատ քիչ դեպքերում՝ դրամ:

3.4. Տոկոս

Աշխատող թյան մեջ մանրամասն նկարագրվել են քեսաբցիների տան տեսակները, տան տարբեր բաժանումները, հարակից կառույցները, գյուղական ու Քեսաբի խիտ թաղերի տների կառուցվածքային տարբերությունները:

Քեսաբի շրջանի բոլոր բնակավայրերի տները կառուցված են տեղական կոպիտ տաշված քարով, պատերը երկշարք են՝ կրաշաղախով կամ հարդով շաղախված ցեխով ամրացված: Տանիքը կազմված է գերաններից, տախտակամածից, սալքարից ու ծածկված **գուլյոնոօգ** կոչվող հողով, որը լողքարով ամրացնելուց հետո դառնում է անշրանցիկ: Տները միահարկ ու երկհարկ են լինում: Երկրորդ հարկը բաժանված է տախտակամածով:

Շրջանի հնագույն տունը կենտրոնական սյունով ընդարձակ մեկ սենյականոց տունն է: Սյան վրա նստող գերանը **իեշ** է կոչվում: Կենտրոնի սյունը տունը բաժանում է չորս հավասար մասերի: Սյուս տեսակի տները ունենում են պատշգամբ կամ սաքու, որը ծածկ ունեցող ու երեք կողմից փակ պատշգամբ է: Միակողմանի տունը պատշգամբից կամ սաքուից բաժանվող առանձին դռներով կամ մեկ ընդհանուր դռով երկու սենյականոց տունն է, իսկ երկկողմանի տունը՝ երեք սենյականոց: Երկրորդ հարկը ունենում է առաջին հարկի նույն բաժանումները, նաև՝ արտաքին քարե աստիճան: Քեսաբ ավանում կամ խիտթաղերում հանդիարում են փայտից կառուցված ներքին աստիճաններ: Որոշ տներ ունենում էին սաքու (**սե՛քի**՝ ծածկ ու երեք կողմից պատ ունեցող ճակատային պատշգամբ): Երկհարկանի տների կողքին կառուցված ընդարձակ սենյակը կոչվում է **սըրհուօկ** (սրահիկ):

Բուխարիկով (ծխնելոյգ) կրակարանը, կժանոցը, անկողնոցը և պահարանը բացված են ներսի պատերի մեջ:

Թնրատունը առանձին կառույց էր ու սովորաբար պատկանում էր ամբողջ թաղին:

Կղմինդրածածկ ու ավելի ընդարձակ տները Քեսաբում սկսեցին կառուցվել 19-րդ դարի կեսերից:

Տների բակերը պարսպապատ չեն, ինչպես սյուննի արաբներին մերձակա մյուս հայկական գյուղերում ենք

հանդիպում: Բակերը առհասարակ ունեն նստարանի բարձրույթ ամբ պատու առանց դռան մուտք:

1950-ական թվականներից հետո շինանյութերի հիմնական փոփոխություն-այսօր փոխվեցին նաև տների ներքին և արտաքին կերպարանքը:

Ֆրանսահայ «Երկիր և մշակույթ» միությունը վերակառուցել է Քեսաբի հին տներից մի քանիսը:

3.5. Տարազը

Գրավոր աղբյուրներից, լուսանկարներից, ժողովրդական երգերից ու մինչև 20-րդ դարի կեսը պահպանված մանրամասներից կարելի է պատկերացում կազմել քեսաբցիների տարազի մասին, որը շատ մանրամասներով տարբերվում էր ալևի և թուրքմեն հարևանների տարազներից:

Բարդ էր մանավանդ կնոջ գլխի հարդարանքը. մազի հյուսվածքը յոթ հատ էին ու կոչվում էին **ծե'միրք** (ծամ-եր-ք):

Երիտասարդ աղջիկները կապում էին կարմիր **շալ Ե դաստարակ**, նրավրայ դնում էին կապույ տբեհեզից կոնածել գլխարկ, որ **շոքքե** էր կոչվում: Դագարդարուած էր լինում արծաթյա դրամներով, իսկ նրա առջևից ու կողմերից կախում էին արծաթյա շղթաներ (**շեքել էթ**), որոնք զարդարում էին օրիորդի ճակատն ու քունքերը: **Շեքքեն** ծածկում էին **շերե** կոչվող գունավոր դաստարակով, որն իջնում էր ուսերն ի վար ու կարելի էր փաթաթել պարանոցի շուրջ:

Տարիքով կնոջ գլխաշորը ավելի մանրամասնությամբ ունենր: Այսպես՝

ա/ Նախ գլուխը ծածկում էր գունավոր դաստարակով, որի ծայրերը, հետևից դարձնելով, հանգուցում էր գլխի վրա:

բ/ Սրավրա դնում էր **դագի**՝ գլխարկ, որ կարճ ու կարմիր ֆես էր՝ առանց ծոպերի: Գլխարկի տակից դաստարակի դուրս մնացած մասը ճակատի վրամի կանոնավոր երիզ էր կազմում:

գ/ Դագիի ճակատին կապում էր **կուրը**, որ հանգուցում էր հետևը: Կուրը մի նեղ գօտի էր, որի վրա կարճ շղթաներով կախված էին լինում ոսկյա դրամներ, նույնիսկ հին դրամներ՝ հռոմեական, բյուզանդական, արաբական և կիլիկյան-հայկական, որոնք Քեսաբի շրջանում հողի աշխատանքների ժամանակ տեղ-տեղ գտնվում էին: Կուրը երբեմն ուղղակի կարված էր լինում գլխարկին:

դ/ Գլխարկի վրա դնում էր բեհեզյա ընդարձակ ծածկոց՝ **խումարը**: Վերջինս լինում էր կապույտ, կարմիր կամ սև: Յին ժամանակներում տղամարդկանց ներկայությամբ կանայք, խումարի մի կողմը քիթ-բերանի վրայից տանելով, պահում էին մյուս ուսի վրա: Դաստարակը, գլխարկը և ծածկոցը իրար ամրացվում էին անհամար ծամակալներով:

3.6. Խոհանոցը

Քեսաբի **խոհանոցը** մինչև 1950-ական թվականներն ուներ շատ ինքնատիպ ու անկախ բնույթ և տարբերվում էր թուրքմենների և ալևիների խոհանոցից: **«Աս միրը չի, սա քիստինուօգ չըղուօգ»** (դա մերը չէ. դա քիստինակ չեղավ. **քիստինակ** են կոչվում Անտիոքի հայերեն բարբառները և ամեն ինչ, որ հատուկ է շրջանի հայության), **«Աս թուրքմուկը կուտի»** (դա թուրքմենը կուտի), **«Թաթերը - (քեսաբցիները այդպես են անվանում ալևի արաբներին) ընծառ սըղուն կընստեն»** (Թաթերը այդպես հացի կընստեն) ասում էին: Նկատվել է, որ որոշ հումքերից պատրաստված մի շարք ճաշատեսակներ երբեք չէին դնում սեղանին, ինչպես խաչած չոր բակլայից պատրաստվող **Ֆուլլը**, սիսեռի խյուսից պատրաստվող **համմոսը**: Բացի այդ երկու ճաշատեսակներից՝ սիսեռն ու բակլան լայնորեն գործածվում էին քեսաբի խոհանոցում: **«Չառ արաբնիրը կուտին»** (դա արաբներն են ուտում), – ասում էին նրանք: Թնորում եփած ձեթով բոկեղը ամայ սորամեն տոնի սեղանի վրա լինում է անպայման. արաբներն ու թուրքմենները հայերի տները շնորհավորելու ժամանակ անհագորեն ուտում են այդ բոկեղներից և իրենց տուն էլ էին տանում. Իսկ նրանց խոհանոցում բոկեղ չկա:

Սեղանի սովորություններն էլ էին տարբեր: Օրինակ, քեսաբցիք սեղանի խոնջայի շուրջը ծալ ապառիկ էին նստում: Մեկը եթե հացը ծնկի վրա դներ, ասում էին՝ **«Դեօն սիճե՞ր իս»** (Դու տաշի՞կ ես - տաշիկ ասում են թուրքերին և առհասարակ մահմեդականներին), կամ հացը եթե երեսնիվար դներ սեղանին, ասում էին՝ **«Դեօն թաթ իս»** (դու թաթ՝ ալևի՞ ես): Ընտանիքներն էլ ունեին տարբեր, երբեմն՝ նույնիսկ տարօրինակ սովորություններ: Օրինակ՝ Սաղտըճյանների նախնիները սխտոր չէին գործածում, սխտոր չէին տնկում, սխտորի հոտելած տուն չէին մտնում, սխտոր տնկված հողը պղծված էին համարում...

Խոհանոցում գրեթե բոլոր հումքերը գյուղացու աշխատանքով հասած ու ստեղծված մթերքներ էին: Դա հատուկ է փակ տնտեսությամբ ապրող հավաքականություներին: Գյուղացին ամեն անգամ իր բերքից ու արտադրությունից մթերում էր բավարար չափով. ամբարվում էին ալյուրի ցորենը, ալյուրը, ծեծած ցորենը, խոշոր ու մանր ձավարի տարբեր տեսակները, փոխիղը, արմտիքներից՝ սիսեռը, ոսպը, աղացված ոսպը, լոբին, առաստաղից կախված էին լինում սոխի ու սխտորի գալոցները, չոր բանջարեղենի կապերը՝ սմբուկ, լոբի, լոլիկ, մի քանի դեղին դդում: Ամբարներում դաս դասված էր լինում չորեղենը՝ թուզը, չամիչը, նուշն ու ընկույզը, թզի և խաղողի պատեղները և այլն: Կարասներում մթերում էին ձեթը, յուղը, պանիրը և այլն:

Քեսաբցու խոհանոցը մեծապես արտացոլում է նրա տնտեսությունը և բազմազան է այնքանով, որքանով բազմազան է նրա տնտեսությունը: Դա առավել հարստանում է, երբ գյուղացին ճանաչում է իրեն շրջապատող բնության բուսական ու կենդանական աշխարհը:

Խոհանոցը մեծապես կապվել է հոգևոր որոշումներով և կրոնական հավատալիքների հետ: Քեսաբցիների կյանքում առանձնահատուկ տեղ ունի ու շարունակում է ունենալ ծիսական խոհանոցը: Ժամանակի պարտադրած փոփոխությունների դեմ հանդիման՝ քեսաբցու խոհանոցը շատ քիչ փոփոխություն է կրել: Ուսումնասիրության մեջ մեկ տասնյակ ենթախմբերի մեջ ներկայացրել ենք Քեսաբի խոհանոցի գլխավոր ու տեստներն ու դրանց պատրաստության եղանակը:

3.7. Տուրքերը

Օսմանյան իշխանության մեջ բազմազան էին գանձվող տուրքերը: **Սիփահի**ները ենիչերիների օժանդակ գործեր էին: Սրանք գյուղական շրջաններում ժառանգաբար փոխանցվող իշխանություններ էին, հսկում էին ու խտավորների ճամփան ու, հարկ եղած դեպքում, մասնակցում ենիչերի-ների կռիվներին: Չորքերի ծախսերը պետք է գոյանային քրիստոնյա գյուղերից հավաքված տուրքերից: Այսպես՝ **Էփզօլուք** գյուղը **տրամու** (հարկատու) էր խասմացի սիփահի Ահմեդ աղայի ընտանիքին, **Տուգաղաճ** գյուղը՝ Անտիոքում բնակվող սիփահի Յաճի Իսա աղայի ընտանիքին, **Տեսթյուր** գյուղը՝ Էյիրճիցի սիփահի Յաճի Օսմանի ընտանիքին: Այս տուրքերը վերացան Իբրահիմ փաշայի իշխանության շրջանում: Վերացան նաև **դուֆր** ու **սիէ** կոչվող տուրքերը, որոնք գանձվում էին մաքսատնից անցնող քրիստոնյաներից:

Գյուղացիներից գանձվում էր **աշար** կամ **տասանորդ**: Սա ամենից ծանր ու հոգեհան տուրքն էր: Տուրքից ավելի ծանր էր գանձումը, որը կատարում էր **թահսիլ տարը**, այսինքն՝ թուրքմեն կամ հայ հարկահավաք կապալառու: Կայսրության մեջ հարկահավաքման իրավունքը տրվում էր կապալով: Վալին կապալը դնում էր աճուրդի, որ առանց կաշառքի էր լինում: Գլխավոր կապալառուս իր իրավունքը վաճառում էր որևէ միջակ կարողության տեր կապալառուի, սա էլ՝ ավելի մանրի: Վերջինս գյուղ էր մտնում աստիճանավորների միամբողջ ոհմակով, լավագույն դեպքում՝ մի քանի գինավորներով ու մահակալի հետևորդներով: Նա իր բաժինը մեծացնելու անբարեխիղճ միջոցների էր դիմում: Նախ՝ ամբողջ տարին նրա մարդիկ մտնում էին գյուղերը, խուզարկում և իմանում, թե ի՛նչ բերք ունի գյուղացին:

Անու նև Էր միայն տասանորդ. գանձումը երբեմն հասնում էր 50 տոկոսի:

Թահսիլ տարը հոգեհան էր դառնում մանավանդ հունձքի ու կալի ժամա-նակ: Գիշերը նա «կը թաքմէր», այսինքն՝ հատուկ դրոշմով նշանակում էր թեղը: Գյուղացին չէր կարող երևել մինչև տուրքը չնշանակվեր: Անակնկալ անձրևը կարող էր փչացնել հունձքը, քամին ու աղվեսները կարող էին խառնշտկել դրոշմը: Նման դեպքերում, գյուղացին գողոթյամբ կմեղադրվեր. հետևաբար նա համաձայնում էր, որ հարկահավաքը ամռնի այնքան, որքան հարմար համարեր:

Մյուս տուրքերից էին **Էմլ աք վերկըսը** (կալվածահարկը), **աղնամ վերկըսը** (անասնահարկը), **թոփոսք փարսը** կամ **եօլ քըրսը** (ճանապարհահարկը), **արը փարսը** (մեղվահարկը), **պատկ հասքարիեն** (գինվորական փրկագինը), **թեմեթթիևը** (շահատուրքը): Վերջինս գանձվում էր վաճառականներից և արհեստավորներից:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՅՈՒՐԿԱՆՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

4.1. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԳՄՈԼՅՈՒՆԸ

Այս բաժնում ներկայացվել են նախամուսնական տարիքի տղաների ու աղջիկների նկատմամբ ժողովրդական հասկացողությունները և մանրամասն նկարագրվել ընտանիքի կազմույթյան բոլոր փուլերը:

ա. **Նշանախոսույթ ու նը՝** խնամախոսույթ ու նը, նշանտուրք, փեսացուի կողմի փախվածայի պատրաստույթ ու նը, փախվածան խնամու տուևնը, այնտեղ փեսացուին ընկերների՝ փախվածան ու տելու արարողությունը, նշանված շրջանի սովորույթ ու ններն ու պարտականությունները:

բ. **Յարսանիքի** մեկ շաբաթ տևող հանդեսներն սկսվում էին երկու կողմերի կանանց **գումաք կարել**ով կամ **հարսանեկան տարագների** կարուձևով, որին հետևում էր **ուժեսք** բաժանելը, այսինքն՝ մերձավորներին նվեր բաժանելը, որ տղայի կողմից հարսանիքին ներկալինելու հրավեր էր համարվում, **ծրար դնելը**, որ հարսնացուի մերձավորներն էին անում, **հայրական օժիտ** կամ ջեհիգի պատրաստույթ ու նը, որ հարսնացուի հայրն էր անել տալիս, չորեքշաբթի երեկոյան փեսացուի՝ հարսանիքի օրվա **հերիսայի ցորեն լվանալն ու ծեծելը**, հինգշաբթի օրվա **հարսանիքը** փեսացուի տան մեջ, երբ հատուկ կերպով կատարվում էր ուտեստի և սեղանների պատրաստույթ ու նը, ապա՝ կերուխումը, հինայելու արարողությունը, խրախճանքը՝ խաղերով, պարերով ու պարերգերով, շաբաթ կեսօրվա հարսանյաց ճաշն ու խնջույթը, փեսան,

փեսեղբայրը, հարսը հագցնելու արարողությունները, հարսնառը և պսակը եկեղեցում, հարսը տուն բերելը, հայրական ջեհիզի տեղափոխումը, փեսային «**հաճիկ**» կերցնելը, կիրակի երեկոյան առագատմունքները:

Հատուկ ուշադրություն ենք արժանացրել վերոնշյալ փուլերում գործած-վող շնորհավորանքի խոսքերին, ասույթներին, հավատալիքներին ու հասկացություններին, նահապետական ընտանիքի ավանդություններին և սովորություններին պահպանմանը, մանավանդ նորակազմ ընտանիքի հայեցի-ությունը պահպանելու հանգամանքին: Այդ իմաստով, հետաքրքրական է հիևայելու ծեսը, որը կատարվում էր պետական հյուրերին հատկացված օդայում, հետևաբար հիևայի արարողությունը սկսելու համար հիևան շաղախողը թուրքերեն էր դիմում ներկաներին: Հարսնավորները բացառանջում էին՝ «Չիյը» (Ոչ): Հիևան շաղախողը երկրորդ անգամ դիմում էր բարբառով:

Ըսպիտուօկ մուրեօք,

Սպիտակ մորուք,

Սիվ մուրեօք,

Սև մորուք,

Հուօրս, փիտու,

Հարս, փեսա,

Մինծ, սըզսեկ,

Մեծ, պզտիկ,

Հե'րեօստ պօքուօտ,

Հարուստ, աղքատ,

Իշգէն, սրղու,

Աղջիկ, տղա,

Ըմմընիեդի իզնուօն,

Ամենիդ հրամանով,

Դիսե'ծուօն

Կամբով

Հինի' մմը:

Հիևայե' մ:

- **Հօ' վը, հօ' վը** (այ ո', այ ո') և ինուժ էր պատասխանը բարբառով:

Սա բացահայտ հաստատում էր մայրենի բարբառի կարևորությունն ու առաջնահերթությունը համայնքի կյանքում:

Հարսանեկան բոլոր պարերգերը կատարվում էին բարբառով: Օտար հյուրերին կամ թուրքախոս հայերին արտոնելի էր թուրքերեն խաղիկներ կատարելը: Սակայն հետաքրքրական է նշել, որ հարս ու փեսային տարազ հագցնելու արարողությունները կատարվում էին բացառապես հայերեն երգերով: Հարսի համար կատարում էին «**Ըրե' ինծ հալ ալ**» երգը, իսկ փեսայի համար՝ «**Չարթի' ր, որդեա' կ**» հայրենասիրական երգը: Յուրաքանչյուր տնի կատարումից հետո տարազի մի մասը գլխավերևը պուռյտ տալով երեք անգամ կրկնում էին՝ «**Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի** – Աստված թող շնորհավորանի): «Չարթի' ր, որդեա' կ» հայրենասիրական երգով փեսան հագցնելը Քեսաբի հարսանիքների ամենից հանդիսավոր արարողություններից մեկն է: Այդ երգով ընտանիքի կազմությունը ազգային պարտականության է

վերածվում: Ծերերը չէին հիշում, թե նախապես ի՛նչ երգով էր կատարվում այդ ծեսը:

Հանգամանորեն ներկայացվում են նորակազմ ընտանիքում նորահարսի դերը, նրան տրվող մականունները, **առջընդորքը** (պսակից հետո հայրական տունն առաջին այցելությունը), հարսնատեսի այցելությունները, ծննդաբերությունը, երեխաների դաստիարակությունը, նահապետական փոքր ընտանիքի բնույթը, ամուսնացած որդիներին բաժանելը, հայրական ժառանգությունը, գերդաստանական թաղերի գոյառումը:

Ընտանիքի կազմության բոլոր արարողություններին գումարակցվում են հատուկ մաղթանքներ, կանչեր, ասացվածքներ, երգեր ու պարեր, հավատալիքներ, որոնք ինամքով գրի ենք առել, հրատարակել ու դրանք մեջբերել ուսումնասիրության մեջ:

4.2. Հասարակական հարաբերություններ

Ուսումնասիրության մեջ խոսվում է հասարակական հարաբերություններին չորս տեսակի մասին՝ ազգակցական (բարեկամական), դրացիական, աշխատանքային և պարագայական:

Ազգականի (բրբռ.՝ **հընտանա**) հանդեպ սերունդ հարգանքը նահապետական բարքերի մաս էր կազմում: Տոն-տաղավարի առաջին այցելությունները տրված էին ազգականներին: Կնունքը, ածիլունքն ու հարսանիքը առանց ազգական ընտանիքների ներկայության չէին լինում: Հարգանքի և այցելությունների մեջ նահապետական կարգ ու կանոնը խտագույն կերպով պահպանվում էին, «**Ան Եառանճ ի քան ըզմիպ ը**» (նաավելի առաջ է մյուսից) ասում էին: Օրինակ՝ ազգական եղբայրների ընտանիքներին տրված այցելությունն սկսվում էր մեծ եղբոր տնից, հերթով: Կարիքի կամ դժբախտության, օգնություն պահանջող աշխատանքների ժամանակ ազգականները օգնության էին գալիս. «**Սաղ ընտուն հընտե՛նեքը, մայ տուն չըն թուղօ զը**» (ողջ մնան ազգականները, մեջտեղ չեն թողնի նրան) ասում էին: «Իրար վերցնող» ազգականները գովեստի էին արժանանում:

19-րդ դարի վերջին նահապետական փոքր ընտանիքի քայքայման հետ, թաղերի և գյուղերի բնակչության պատկերը սկսեց փոփոխվել: Արյունակից ընտանիքների թաղերում սկսեցին երևալ ուրիշ ընտանիքներ: Ծուկայական հարաբերությունների զարգացման հետ ազգականական, մանավանդ արյուն-նակից ազգականների հարաբերությունները որոշ փոփոխություններ կրեցին: Ոչ ազգակից դրացի ընտանիքներ գյուղական կյանքի պայմաններում իրարից անմիջական կախում էին ու նենում,

ինչը սերտ հարաբերութիւններ մշակելու առիթ էին դառնում: **«Եսասնճը դըրե՛ցէն քե՛նըզ հառօ հընստ՛նէն աղիւր ի»** (օտարական դրացին հեռու ազգականից լավն է) սասցվածքը ստեղծվել է այդ շրջանի փորձառու թյան հիման վրա:

Քեսաբցիների դրացիական հարաբերութիւնները շատ սերտ եղել են. մասնավորաբար կանայք իրարու տուն ելնումուտ էին անում ազատ-համարձակ: Որևէ կարիքի համար մի պտղունց աղ, երկու բաղարջ հաց, մեկ կաղապար օճառ փոխառնելու համար հարևանի դռնից ներս մտնելը անհարմար էր համարվում: Այդուհանդերձ գյուղացին ասում էր. **«Դօռդո՛ւ ամօր վե՛կի՝ դըրե՛ցէդ հարամ մը հե՛նի»** (Դուռդ ամուր փակիր՝ հարևանիդ գող մի հանի):

Աշխատանքային այցելութիւնները առհասարակ առանց հրավերի էին լինում: Մթերքների պատրաստութիւնը, գյուղական աշխատանքի բազմաթիվ տեսակներ օգնական ձեռք էին պահանջում: Փոխօգնութիւնը գյուղի ամենից գեղեցիկ կողմերից էր: Դուռ-դրացի կանայք հարկ եղած դէպքում ձեռք էին մեկնում հարևանուհուն, երբ նա ուրիշ անհետաձգելի գործ ունենար կամ օգնական ձեռքի կարիքն զգար:

Բայց կային նաև այնպիսի աշխատանքներ, որոնց հավաքական բնույթը ավանդութեամբ սրբազործվել էր: Այդպիսի աշխատանքների ժամանակ իրար ձայն տալը բավական էր, որ կանայք և տղամարդիկ փութային և աշխատանքում բաժին վերցնեին: Այս պարագաները ինքնաբերաբար վերածվում էին կերուխումի, ուրախութեան, երգի, պարի ու խաղի առիթների:

Դարագայական այցելութիւնները այլազան էին՝ բարի գալուստի, շնորհավորանքի, աչքալուսանքի, ապաքինման, պատահական դէպքի առիթով օգնութեան վազելու այցելութիւններ: Ըստ առիթի՝ այցելութիւնները պարաս ձեռքով էին լինում. հյուր գնալու պարագայում տանելու միջտ մի բան կլիներ՝ բարձ ու վերմակ, հիվանդի այցելելիս՝ որոշ մթերք կամ բուսական դեղամիջոց և այլն:

Ամենից մարդաշատ այցելութիւնները լինում էին մահվան դէպքում: **«Չաղուր իե՛ւրևօրը ուշէտ կը հասնա»** (գուլժը շուտ տեղ կը հասնի), ասում են քեսաբցիք: Յարագատ կանայք դիակի շուրջ նստած ողբեր էին ասում (**սէ՛րիլ**): Մի քանի հասկացող մարդիկ կամ գյուղի ատաղձագործը դագաղն էին սարքում, իսկ մյուսները փոխում էին մահացածի հագուստները: Սովորութիւնը ունէր, որ քեսաբցիք մեռելին հագցնեին նրա ամենից նոր ու ընտիր հագուստները, իսկ դագաղի մեջ դնեին նրա ամենից սիրած բանը՝ ծխախոտ, մեկ շիշ օղի և այլն: Դագաղի կափարիչը փակում էին միայն տնից դուրս հանելու պահին:

Բահ-բրիչ առած մի խումբ երիտասարդներ, մեկ-երկու ահել և ծերունիներ գերեզմանատուն էին գնում՝ փոսը փորելու: Յուրաքանչյուր թաղում գերեզմանատունը մաքրելու առիթ էր դառնում: Դագաղը ուսամբարձ էր տարվում: Գյուղերում, եկեղեցի չլինելու դեպքում, մեռելը ուղղակի գերեզմանատուն էին տանում: Եկեղեցականի՝ հողը օրհնելուց հետո ամեն ոք մի ափհող էր գցում գերեզմանի մեջ ու ասում՝ **թիթիվ ուգու** (թեթև լինի):

Թաղումից հետո վերադառնում էին մեռելատուն: Հարևան կանայք սուրճ էին հրամցնում: Նրանք յոթ օր մեռյալի հոգիները մենակ չէին թողնում. եկող-գնացող շատ էր լինում, ընտանիքի և սգավոր հյուրերի սեղանը նրանք էին պատրաստում: Ցավակցություն և հայտնելու համար սովորաբար ասում էին.

- **Ասուած ուղուրմա հիգգեն, Էօմըրը Էր եակրիցը, Ասուած սաքրլըք թըղ ուտու** (Աստված ողորմի հոգուն, կյանքը նրա սիրելիներին, Աստված համբերություն թող տա): Մեռելին ակնարկելու համար գործածում էին **իշուօծբէրեն** (յիշած-բարին՝ բարեյիշատակը) բառը:

Հարագատները գերեզմանատուն են այցելում տարվա հինգ մեռելոց օրերին, դաշտային ծաղիկներ դնում շիրիմներին, մոմ վառում ու խուսկ ծխում: Բացի այս առիթներից, գերեզմանատուն այցելել և ողբ հյուսելը չի քաշալ երվում, **«Յէ՛նկեստ թուղէք ըզիսսուծենն»** (Հանգիստ թողէք մեռելներին) ասում են:

4.3. Տոները

Հայ կական կրոնական տոների հետ կապված ժողովրդական արարողություններն ու ծեսերը, հակառակ նորադարձ օտարադավանների որոշ անտարբերության կամ նույնիսկ արհամարհանքին, ավանդույթի ու ժովշարունակեցին ապրել ու ինչ-որ չափով գոյատևում են: Աշխատության մեջ բծախնդրության ամբողջականացումը ենթադրում է, որ տարվա, ս. Ծննդի, Բարեկենդանի ու Տյառնընդամաքի, Ծաղկազարդի, ս. Հարության, Վարդավառի, ս. Աստվածածնի վերափոխման, Խաչվերացի, ս. Հակոբի տոների հետ կապված ժողովրդական հավատալիքներն ու ծեսերը, մասնակի կամ համաժողովրդական ու խառակացությունները, որոնք այս մեկուսի հավաքականության ազգային դիմագծի պահպանության մեջ կարևոր դեր են ունեցել:

Ժողովրդական տոնախմբություններին ընկերանում էին մանավանդ ծիսակա խաղերը: Կարելի է ասել, որ չկատն առանց խաղի ու խաղերգի: Այդ խաղերից ու պարերգներից ոմանք գալիս են դարերի խորքից ու արտահայտում հնագույն հավատալիքներ: Այդպիսին է, օրինակ, Բարե-

կենդանի գիշերը պատանիների ու երիտասարդների «**գե'ջմու-
լօր խաղցընիլ ը**» (գաջմար խաղցընել ը): Երկու երիտասարդներ
ծափովում էին արտառոց լաթերով, մին՝ տղամարդու, իսկ -
մյուսը՝ կնոջ կերպարանքով: Հագուստ-կապուստը պետք է
ծիծաղաչ արժ լիներ: Երեսները մրոտում էին անճանաչելի
լինելու աստիճան: «Գաջմարը» վզին անցկացրած էր լինում,
խխուռնջի պատյաններով շինված մի քանի վզնոցներ, որոնք
ամեն շարժման ժամանակ ծնծղայի նման հնչում էին: «Գաջ-
մար»-ներին ընկերացող տղաները, փողոցներում մի թիթեղի
կամ մի տաշտի վրա թմբկահարելով, ահագին աղմուկ էին հան-
ում ու մուկներով կիպես հայ տարարում Մեծ Պահքի մասին:

ՀԵ՛ՍՏԵ ՄԻԿԵՆ, Հաստի՛ր տի-

Կի՛ն,

ՀԵ՛ՍՏԵ ՄԻԿԵՆ, Հաստի՛ր տի-

Կի՛ն,

Փակա չիշնա, Փակի, չիշնի,
ՇԵ՛բթիւ նց շԵ՛բուօդ, Շաբաթից շաբաթ,
Է՛մսիւ նց Է՛մես, Ամսից ամիս,
ՏԵ՛րիւ նց տարա, Տարուց տարի,
ՀԵ՛ՍՏԵ ՄԻԿԵՆ, Հաստի՛ր տի-

Կի՛ն,

ՀԵ՛ՍՏԵ ՄԻԿԵՆ: Հաստի՛ր տի-

Կի՛ն:
Ապաճափով կրկնում էին հետևել ել պարային կանչը:

Ղոմարտը գաջմար, դիրանի նագաջմար:

4.4. Խաղերը

Խաղը կարելի է անջատել գյուղի կյանքի շատ -
երևույթներից: Խաղը ներկա է հավաքական աչխատանք-
ներում, ընտանիքի առօրյա կյանքում, նիստուկացում, հա-
սարակական հարաբերություններում և տոնակատարու-
թյուններում: Հետևաբար, առանց խաղի նկարագրության՝
շատ քան կպակասի տվյալ երևույթի ծիսակարգից: Այդ պատ-
ճառով էլ ծիսական խաղերի նկարագրությանն անդրադարձել
ենք աչխատության տարբեր բաժիններում:

Խաղն ամենից առաջ դաստիարակչական ու ճանաչողական մ-
իջոց էր: Մանկական խաղերգներից ու դրանց ընկերացող
շարժումներից մինչև մեծահասակների խաղերն ունեն այդ
բովանդակությունը: Միշտ էլ, որ հաճելի ժամանց են խաղե-
րը, դրանք նաև սեփական կամ հավաքական առավելությունը
հաստատելու միջոց են: Հատկապես տղաների խաղերը օգնում
են, որ նրանք մեծանան չարքառ և առողջ, սովորեն վազել ու
ցատկել, ուժ գործածել, ծանրություն և քարձրացնել, դիպուկ
հարվածել և այլն: Աղջիկների խաղերում նկատելի է մատ-
ների ճկուն գործածությունը: Երեխաները նմանողական խա-
ղերով սովորում էին ցանել-հնծել, եփել-թափել, կարել-կա-

րկատնել, հայրլինել, մայրլինել և այլն: Ճատխաղեր պարզապես ախատանքի մաս էին կազմում, ախատանքի ընթացքում էին ծնվում ու կատարվում, ինչպես՝ ճամփորդության, հունևձքի, բեռ կրելու, աղբյուրից ջուր Լցնելու, կուժը շալակելու և այլն:

Բացի ծիսական խաղերից, որոնք նկարագրվել են համապատասխան մատերում, գրառել ենք շուրջ հարյուր խաղ: Քեսաբում կատարված խաղերը բաժանել ենք զանազան խմբերի, ինչպես՝ բերդախաղեր, պահմտոցիներ, արագավազության, ցատկի, ծանրաբարձության, ուժական, նշանառության, գնդակի, գնդիկի և այլ խաղեր: Երեխաներն ունեին բազմաթիվ նմանողական խաղեր և վիճակախաղեր: Կային նաև բազմաթիվ խաղեր՝ կապված կենդանիների և բույսերի հետ:

Ճատու շատ խաղերի անբաժան մասն էին կազմում կանչերը, հաշվերգերը, ծաղերգերը, խաղերգերը: Որոշ խաղերգեր իրենց մեջ թաքցնում են նաև պատմական հիշողություններ:

Խաղերն առհասարակ կատարվում էին տարբեր առիթներով. որանքլինում էին՝ **ծիսական խաղեր**, որոնք այդ առիթներից և պահերից դուրս երբեք չէին կատարվում, **կազմակերպված խաղեր**, որ կատարվում էին տարբեր հավաքների ժամանակ, ինչպես Բարեկենդանի շաբաթվա ընթացքում, **եղանակյա ին խաղեր**, որոնք պահանջում էին բնակլիմայական հատուկ պայմաններ, **հանգիստի պահերի խաղեր** և **պատահական խաղեր**, որոնք կատարվում էին հանկարծակի՝ ստեղծված իրադրության համաձայն:

4.5. Ժողովրդական բժշկություն

Քեսաբի շրջանում գործող արևելյան հեքիմների կողքին դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են արևմտյան կրթությունն ստացած մեծ թվով բժիշկներ: Քեսաբցի բժիշկների համբավը տարածված է եղել ամբողջ Անտիոքի շրջանում: Այսուհանդերձ երբեք չի խամրել ժողովրդական բժշկության կարևորությունը: Դրանում հավանաբար մեծ դեր է ունեցել Քեսաբի շրջանի հարուստ ու խայտաբղետ բուսական աշխարհը: Դեռ մինչ օրս ժողովրդական բժշկություն կից օգտվողներ կան:

Մենք հնարավորինս խնամքով ներկայացրել ենք ժողովրդական բժշկության ըմբռնումները, հիվանդությունների մասին ժողովրդական պատկերացումները, բժշկության մեջ օգտագործվող բուսական, կենդանական ու քիմիական դեղամիջոցները, հմայական ու կախարդական միջոցները, դաղելու արտաքին միջոցի դիմելու պարագաները, խայթոցի, թունավորման, այրուցքի ու կոտրվածքների դեպքում օգտագործվող հնարքները և այլն:

Անդրադարձել ենք նաև անասունների հիվանդություններին ու դրանց բուժման ժողովրդական եղանակներին:

4.6. Հավատալիքներ

Քեսաբցու հավատալիքների շղթայում մեծ տեղ ունի **մեղքի** հասկացությունը: Մեղք էին նկատվում կենցաղում, հասարակական կյանքում, աշխատանքում բազմաթիվ երևույթներ, օրինակ՝ ջուր խմողի հետ խոսելը, նրան ձեռնելը, խիելը կամ վախեցնելը: **Չուր խմած արեն նոյ նիսկ օձը սպանելը մեղք ունի** ասում էին: Հացը **նուր նաարաթ** (արար.՝ լույս շնորհք) էին համարում: Մեղանի մոտ փոքրիկներին հացի հանդեպ հարգանք էին սովորեցնում: **Հե՛ցցեն իալ իշուօղը է՛նիւթա կը մընու** (հացին ծուռ նայողը անոթի կմնա), – ասում էին քեսաբցիները: Հացը երբեք ծնկի վրա կամ երեսն ի վայր չէին դնում: Հացը դանակով կտրելը մեղք էր համարվում:

Աղն ու հացը բարեկամության ու հավատարմության նշաններ են: Մեկի սեղանին գտնվել՝ նշանակում էր **աղ ու հաց** հաստատել տանտիրոջ հետ:

Գետին թափած արը շուտով ավլում ու կրակն էին թափում: Աղը գետին թափող փոքրիկին ասում էին. **Մեղք ունի, մյուս աշխարհում թափած աղիդ հառիկները թարթիչներովդ պիտի հավաքես:**

Ամոթ էին համարվում մի շարք վարմունքներ, անդադար հիշեցնում էին թե ինչ է ամոթը՝ հասարակական հարաբերության ունենում:

Չարի գոյությունը հավատում էին ու մաղթում էին.

- **Աստուծ չուօր ուրի, չուօր ճանվքի, չուօր մարդի հառո պիիի** (Աստված չար օրից, չար ճամփից, չար մարդուց հեռու պահի):

- **Աստուծ չուօր իջի, չուօր սըղճի, չուօր լիզվի հառո պիիի** (Աստված չար աչքից, չար ժամից, չար լեզվից հեռու պահի):

Չար աք ունեցողների ետևից անիծում էին՝ **ըրկը ազո կուրնու** (երկու աք բերը կուրնան): Չար աչքից պահպանել ու համար կապույտ հլուն դնում էին մանուկների խանձարուրի վրա, լամբակի վրա, ձիու թամբի, էշի կորթույնքի (համետի), կովի ճակատից անցնող գոտու, եզան եղջյուրի վրա, ձիու պայտ էին կախում տան դռան վրա, հին կոշիկ կամ եղջերավոր կենդանու գանգ էին ամրացնում այ գուցանկապտին:

Չարը վանելու համար **Իսսիւս Քըրըստիւս** էին ասում ու խաչակնքում առօրյա կյանքի ամեն մի նոր փուլից առաջ, առավոտյան դուռը բացելուց մինչև երեկոյան անկողին մտնելը:

Ոչ բարեգեպ (թարս) կամ բարեգեպ (խեբ) էին նկատում աշխատանքում որոշ պատահարներ, մարմնի որոշ անսպասելի շարժումներ, կենդանիների հայտնվելը կամ նրանց հանած ձայները, առարկաների պատահական որոշակի դաս դասումը և այլն:

Հավատում էին առասպելական էակների և ոգիների գոյությանը:

- **Արվանտը** իբրև վիշապ էին պատկերացնում, հավատում էին, որ նա հին սրբավայրերում կամ նրանց մոտակա աղբյուրներում է ապրում:

- Հավատում էին **Կիզիցիկ պարուկին**, որ իբր սպիտակամորուս մի ծերունի է և ապրում է ավերակ սրբավայրում՝ արվանտի հարևանությամբ:

- Հավատում էին կես մարդ-կես կենդանի էակների գոյությանը: Հավատում էին, որ կա **ծովի առջիկ**, որն իբր երևում է Գարատուրանի ծովափում:

Ուխտի գործությանն էին հավատում: Ուխտ էին անում եկեղեցու, ավերակ սրբավայրերին, նրանց մոտի սուրբ համարվող ծառերին: Բացի Քեսաբի Պալուսից (1939թ.ից՝ Թուրքիայի տարածքում)՝ ուխտի էին գնում մուսալեմ՝ ս. Թովմաս առաքյալի վանքը, Սիրիայում Ռուճի հովտի հայաբնակ Յակուբիե գյուղի ս. Աննա և Արամոյի ս. Գևորգ եկեղեցիները: Նախապես, երբ արաբ-խորայելական թշնամության պատճառով պետական արգելք չկար, երունաստեղում ուխտի էին գնում, ձեռքի վրա խաչի դաջվածքով վերադառնում ու **հաճի** կամ **մուղտուսի** էին կոչվում:

Ուսումնասիրության **Վերջաբանում** շարադրվել են այն գլխավոր եզրակացությունները, որոնց հանգել ենք այս աշխատության մեջ:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկին հետևում է **Հավելված**ը, որտեղ ներկայացվել են Անտիոքի շրջանի հայկական բնակավայրերի, Քեսաբի, քեսաբցիների տարագրության ուղիների երեք քարտես՝ թիվ 1-3, Քեսաբի տան կառուցյալի տարբեր տեսակներ ներկայացնող գծանկարներ՝ թիվ 4-10, գյուղեր, հին թաղեր, վերականգնված տներ, եկեղեցիներ, աղբյուրներ ու հին տարազ ներկայացնող լուսանկարներ՝ թիվ 11-25: Մի շարք լուսանկարներ պատկերում են 21 մարտ 2014թ. Քեսաբի վրա կատարված ներխուժումն ու ստեղծած ավերը՝ թիվ 26-29:

Հեղինակի հրատարակած՝ արեւախոսությանն առնչվող գրքերն ու հոդվածները

Ա. Գրքեր

1. «Քեսաբի ժողովրդական երգարուեստը», ձայնագրությունները՝ ժիրայր Բեխսեանի, տպ. «Արեւելք», Հայէպ, 1980, 124 էջ:

2. «Ցամբած Աղբիւրը Նորէն Կը Բխի» (Սարգիս Գապաղեանի պատումը Մուսա Լերան հերոսամարտի մասին), տպ. «Արեւելք», 3 շաբաթ, 1981, 96 էջ:
3. «Քեսապ», Ա. հատոր, հրատարակութիւն 3 շաբաթ 3 ամազգայինի, տպ. «Արեւելք», 3 շաբաթ, 1995, 572 էջ:
4. «Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգային ճեմարանի, 1947-1997», հրատարակութիւն Քարէն Եփփէ Ազգային ճեմարանի, 3 շաբաթ, 1997, 762 էջ:
5. «Քեսապ», Բ. հատոր, հրատարակութիւն Ամերիկաբնակ Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան, տպ. «Ասֆահանի», 3 շաբաթ, 1998, 568 էջ:
6. «Քարէն Եփփէն 3 այ Գողգոթային և Վերածնունդին Յետ», 3 շաբաթ, 2001, 168 էջ:
7. «Քեսապ», Գ. հատոր, հրատարակութիւն Ամերիկաբնակ Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան, տպ. «Արեւելք», 3 շաբաթ, 2004, 672 էջ:
8. «Միջ-Գաւառական Անեքթոններ», Երկրորդ, լրամշակուած ու լրացուած հրատարակութիւն, 3 շաբաթ, 2005, 176 էջ:
9. «Անտիոքի Մերձակայ Ռուճի Յովիտի 3 այ երը. Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն», հրատարակութիւն «Ռիչըրտ Եւ Թինա Գարո-Լայն» հիմնադրամի, թիւ 2, Անթիլիաս, 2006, 260 էջ:
10. «Քեսապի Բարբառը», Երկրորդ, լրամշակուած հրատարակութիւն, Երեւանի Պետական 3 ամազգայինի Եւ «3 այ աստան» հրատարակչութիւններ, Երեւան, 2009, 380 էջ:
11. «The Three Days of Kessab (21-23 March, 2014)», translated by Yervant Kotchounian, Charleston, SC, USA, 2015, p. 170.
12. «Քեսապ», հրատարակութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, «Արեւմտեան 3 այ աստանի Եւ Կիլիկիոյ Յուշամատեններ» մատենաշար, թիւ 8, Անթիլիաս, 2015, 1348 էջ:

Բ. ՀՈՂՎՈՐՏՆԵՐ

13. Քեսապի ժողովրդական Բանահիւսութիւնը, «Ահեկան» մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրութ, 1969, թիւ 4, էջ 23-58:
14. Քեսապի ժողովրդական Բանահիւսութիւնը, «Ահեկան», 1970, թիւ 1-2, էջ 91-108:
15. Քեսապի բարբառի ձայնավորներն ու երկբարբառները, «Ուսանողական գիտական աշխատանքներ», թիւ 17, Երևանի պետական համալսարան, Երևան, 1975, էջ 170-174:
16. 3 շաբաթ Ազգային Ներսէսեան Ուսումնարանը, աղջկանց Եւ մանչերու դպրոցներ, 1876-1919, «3 այ կազեան 3 այ ազգիտական 3 անդէս», Ժ. տարի, Պէյրութ, 1982-1984, էջ 243-266: Վերատարուած Ե նաեւ իբրեւ առանձ-նատիպ:

17. Հալէպահայ Յիւ Գաղու թի Թատերական Կեանքէն, «Օշական» պարբերագիրք, Հալէպ, ԺԲ. տարի, թիւ 1-2, Սեպտ.-Յոկտ. 1989, էջ 40-49:
18. Քեսապի Շրջան, «Հասկ Հայագիտական Տարեգիրք», Նոր շրջան, 2. տարի, Անթիլիաս, Լիբանան, 1994, էջ 309-329: Վերատպում է նաեւ իբրեւ առանձնատիպ:
19. Ալեքիֆո Գոլէճ, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, հրատարակութիւն Յ. Բ. Ը. Մի Մատենագիտական Յանձնատու մբի, Ե. տարի, Հալէպ, 1996, էջ 356-364:
20. Քարէն Եփիէ Ազգային ճեմարան, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Ե. տարի, Հալէպ, 1996, էջ 370-385:
21. Սուրիահայ Գաղութը Պատերազմէն Առաջ, «Սիւրիահայ երը Հայաստանում. ինտեգրման ու դիսերը» ժողովածու, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, Երևան, 2015, էջ 26-42:
22. Արևմտահայ երեսի բաղաձայնական համակարգի արդի վիճակը, «Հայ երեսագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, 7-9 հոկտեմբերի 2015թ., գեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2015, էջ 266-271:

АННОТАЦИЯ

Данная диссертация - историческо-этнографическое исследование, посвященное армянонаселенному уезду Кессаб. Кесаб с одноименным поселком и десятками окрестных сел находится в северно-западном уголке Сирийской Арабской Республики, в губернии Латакия.

Диссертация состоит из введения, четырех глав и заключения. В список источников входят неизданные и печатные первоисточники, материалы периодической печати, исследования и собранные нами полевые материалы.

Введение разъясняет актуальность и практическую значимость работы, раскрывает ее цели и задачи, дает описание использованной литературы.

Название первой главы – «Формирование колонии». Колония образовалась в провинции Антиохии как результат внутренних миграций армянских переселенцев в 9-14 вв., и особенно в период османского владычества, в ненадежной ситуации, когда туркменские кочевники захватывали новые поселения в регионе. Так образуется знакомая нам с 18-ого века картина провинциальных городков Бейлана, Сведии и Кесаба, долины Рудж, Кюрдаг и окрестных деревень. Во второй части представляются география Кесабского уезда, населенные пункты, их расположения, кварталы, церковные и школьные структуры и демографическая картина разных времен.

Вторая глава озаглавлена “Кесабский регион с 19-го века до наших дней”. Благодаря благоприятным условиям, созданным Египетским правителем Ибрагимом-Пашой в значительной степени развиваются сельское хозяйство и торговля. После восстановления османского владычества, ради защиты своих прав перед османскими властителями новый купеческий класс обращается к вмешательству иностранных миссионеров. В результате создаются протестантские и католические общины.

Партия Гнчак входит в регион в 1892г. и благотворно влияет на внушение армянам, разделенных на три вероисповедания, о необходимости национального единства. После сдачи гнчакянов Кесаба и Швеции, османские власти начинают строгие угнетения в регионе. Некоторые находят спасение, войдя в покровительство латинских церковных отцов. Формируется четвертая рели-гиозная община – латинская инообрядная община.

Первое разочарование в Османской конституции начинается с бедствия 1909-го года. Турки из Орду, собравшие сброд из Антиохии, Идлиба, Джиср-Шугура, возглавляемые турецкой полицией и высокопоставленными чиновниками, с 23 по 26 апреля входят в Кесабский регион, грабят и поджигают дома, церкви и школьные здания, убивают беззащитных. После недолгой самообороны народ обращается в бегство и находит убежище в Латакии. После бедствия Кесаб развивается, но это беспрецедентное развитие экономики, строительства, образования и духовной жизни останавливается Геноцидом армян в 1915г. Кесабцы, около восьми тысяч жителей, насильственно депортируют по разным направлениям.

Представлены возвращение выживших после первой мировой войны в регион и важная роль Национального союза и Военной власти региона в восстановлении их прав и в создании безопасности. Количество выживших не превосходит 2500 человек. В 1922г. французские власти входят в регион. В 1939г. кесабцам удается выйти из состава Республики Хатай и войти в состав Сирийской Республики. В годы массовой репатриации 2500 кесабцев возвращаются на родину в 1947г. Развитие экономической, духовной и образовательной жизни Кесабского региона, в результате радикальных экономических реформ 1950-х годов, нужно рассматривать в общих рамках сирийско-армянской колонии. Третьим большим потрясением последнего столетия кесабских армян стало вторжение радикально настроенных исламских террористов из Турции с 21 по 23 марта 2014г. В настоящее время Кесаб находится под присмотром сирийских государственных войск, отчасти жители вернулись в свои дома.

Третья глава озаглавлена “Материальная культура”. До радикальных экономических реформ, начавшихся с 1950-х годов и до перехода к развитию плодоводства и туризма, экономика региона была закрытой, земледелие и скотоводство были основаны на принципе удовлетворения необходимых потребностей крестьянского быта, а источниками денежной

прибыли являлись табаководство, лавровое масло, шелководство и пастушество. Были распространены в основном кустарные ремесла. Кесабский рынок играл большую роль в развитии торговли и ремесел.

Пятая глава носит название “Духовная культура”. Здесь представлены состав семьи, структура дома и национальные костюмы, праздники и игры, кухня и народная медицина, с их частичными переобразованиями или полным забытием в результате экономических и трудовых изменений. Здесь широко цитируются связанные с ними обрядовые песни, игры, блюда, верования и представления, базовый словарный запас.

В течение десятилетий собрав, исследовав и опубликовав довольно большую коллекцию Кесабского фольклора и полное описание диалекта, мы обогатили такими материалами третью и четвертую главы.

В заключении представлены выводы диссертации.

Списку источников следует приложение, где вложены три карты армянских поселений Антиохийского региона, Кесаба и путей депортации кесабцев, так же графические рисунки старых домов и 20 фотографий поселений, костюмов, церквей и т. д..

Conclusion

The thesis is devoted to historical and ethnographic research about the region of Kessab. The town of Kessab, with the district of the same name and dozens of surrounding villages, is located in the north-western corner of the Syrian Arab Republic, in the province of Latakia.

The dissertation consists of an introduction, four chapters and a conclusion. The references' list includes both previously published and unpublished sources, periodical press, research and materials collected through our field work.

The introduction explains the urgency and practical importance of the work, reveals its goals and objectives, gives a description of the used literature.

The first chapter is titled as "Colony Structure". The colony was formed in Antioch in the 9th-12th centuries as a result of massive internal migration among Armenians. It was especially vivid in the period of Ottoman domination of Turkmen nomads, when the local population was seizing new places of residence because of insecure situation. So this is how the provincial towns of Beylan, Souedia and Kessab, as well as the villages of Rouj Valley, Kurd Dag and Latakia, shaped our familiar image of the 18th century landscape. The second part presents the geographical region of Kessab, with its location, settlements, vaults, church and school buildings, as well as its demographic image in different times.

The second chapter has the title of "The Region of Kessab from the 19th Century till Today". Thanks to the favorable conditions created by Ibrahim Pasha of Egypt, agriculture and trade greatly developed. After the re-establishment of the Ottoman power, that market layer reaches out to foreign intervention in order to protect their rights. As a result, the Protestant and Catholic communities were formed.

Hnchakyan party establishes in the region in 1892 and starts instilling the need for national unity among three sectors of the divided nation. After the Kessab and Souedia Hnchakians abandoned, the Ottoman authorities started severe persecutions. Some people found salvation coming under the aegis of the Latin fathers. Thus, a fourth sector was shaped, the Latin community, with its different traditions.

The first disappointment from the Ottoman Constitution took place with the 1909 disaster. On April 23-26, Ordu Turks, together with Antioch, Idlib, Jisr al-Shughur mob, under the leadership of the Turkish police and high-ranking officials, entered Kessab, grabbed and fired the houses, churches and school buildings, killing the reliefless Armenians. After a short self-defense, people run away and found shelter in Latakia. After the disaster, Kessab watched an unbelievable development on economic, construction, national and educational levels, which stopped with the 1915 Genocide. Kessab Armenians, about eight thousand people, were deported in different directions.

After World War I, the survivors returned home and the important role of the Military Authority and the National Union in re-establishing and creating a sense of security. The number of survivors was less than 2500 people. In 1922 the

French authorities entered the region. In 1939, the Armenians of Kessab managed to get out of the State of Hatay and enter into the State of Syria. In 1947, 2500 Kessab Armenians repatriated to their Homeland. The economic, educational and spiritual rise of the region in 1950s should be viewed as a result of radical economic changes and in the overall framework of the Syrian-Armenian community.

The third big shock for the Kassab community in the last century happened on March 21-23, 2014 with the invasion of radical Islamist terrorists from Turkey. Currently Kessab is under the control of Syrian government troops, most residents have returned to their homes.

The third chapter is titled "The Material Culture". Before the radical economic changes started in the 1950s, the region had a closed economy, agriculture and animal husbandry. Farmers living was founded on the principle of immediate needs and debts; the sources of cash income were tobacco, laural oil, sericulture and herd keeping. The majority of artisanal crafts were home-made. Kassab market played a big role in the development of trade and crafts.

The fourth chapter is called "The Spiritual Culture". It presents the family structure and costumes, holidays, games and cuisine, folk medicine, etc. These all underwent some partial or complete changes or losses due to economic and work developments. The chapter widely quotes their ritual songs, games, food, beliefs and perceptions, basic vocabulary.

This quite large collection of folklore and dialect, collected and analyzed for decades by me, now completes the description of Kessab, and is published in the third and fourth chapters.

In the epilogue, the conclusions of the thesis are presented.

References' list is followed by the appendix of three maps which outlines the Armenian areas of Antioch and Kessab, the exile routes of Kessab Armenians, as well as drawings of old homes and 20 photos of villages, churches, springs and dresses.